

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՏԳ- 342.5 (479.25):347
ԳՄԳ- 67.99 (2Հ)+67.99(2Հ)3
Ղ 466

ԳԵՂԱՄ ՀԱԿՈՔԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Հեղինակ՝ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ ՀԱԿՈՔԻ,

Իրավագիտության դոկտոր,

պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ

Ղարախանյան Գեղամ Հակոբի

Հ 466 Քաղաքացիական կացության ակտերի գրանցում. _Եր.: ԵՊՀ
հրատ., 2010 թ., 96 էջ:

ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Գիրքը գրված է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 2004 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած «Քաղաքացիական կան կացության ակտերի մասին» օրենքի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, այլ օրենքների, ինչպես նաև խնդրո առարկայի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ արդարադատության նախարարի կողմից 2007 թ. մայիսի 14-ին արձակված թիվ 97-Ն հրամանի հիման վրա:

Գիրքը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններ գործունեությունը պարզաբանող մայրենի լեզվով լույս ընծայված առաջին աշխատությունն է:

Աշխատությունն արժանացել է ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության հավանությանը:

Նախատեսված է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների աշխատողների և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեությանը հետաքրքրվողների համար:

ՀՏԳ- 342.5 (479.25):347
ԳՄԳ- 67.99 (2Հ)+67.99(2Հ)3

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2010

ISBN 978-5-8084-1237-8

© ԵՊՀ հրատարակչություն, 2010

© Գ.Հ. Ղարախանյան, 2010

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացու կյանքի ընթացքում նրա ծննդյան պահից մինչև կյանքի ավարտն առաջանում են տարաբնույթ կացություններ, որոնք էլ տարբեր քաղաքաիաիրավական վիճակ են առաջացնում նրա համար: Երբ երեխան ծնվում է, պետք է գրանցվի նրա ծնունդը, որ պաշտոնապես նշանակում է այդ անձին հաշվառել պետության կողմից սահմանված կարգով, ուրեմն և ճանաչել նրա գոյությունը որպես հասարակության անդամ: Նրա մահը, անկախնրանից, թե երբ է այն տեղի ունեցել և ինչ հանգամանքներում, գրանցվում է: Այն էլ վկայում է նրա կյանքի ավարտը: Քաղաքացու կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններ են նրա ամուսնությունը, ինչպես նաև ամուսնալուծությունը, երեխա որդեգրելը, հայրությունը որոշելը, նաև նրան անուն, ազգանուն- հայրանուն տալը:

Հաշվի առնելով քաղաքացու կյանքում տեղի ունեցող այս իրադարձությունների կարևոր նշանակությունը, օրենսդիրը հատուկ իրավական կարգա վորման է ենթարկում այդ իրադարձությունների հետ կապված հարաբերու թյունները:

Քաղաքացիական կացության վերը նշված ակտերը գրանցվում են քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմիններում: Քաղաքացիական կացության ակտերի գրանցման կարգի հաստատումը համարվում է ամուսնության և ընտանիքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության խնդիրներից մեկը:

Քաղաքացիական կացության ակտերը դրանք այն հանգամանքներն են, որոնց հետ օրենսդրությունը կապում է քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների առաջացումը, փոփոխումը և դադարումը: Քաղաքացիական կացության ակտերի իրավաբանական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանք բնութագրում են քաղաքացիների իրավական վիճակը: Քաղաքացիական կացության ակտերի թվին օրենսդրությունը դասում է միայն կարևորագույն հանգամանքները (տես ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 49 հոդվածը): Վերը նշված հանգամանքների վրա հասնելու հետ տեղի է ունենում քաղաքացիների իրավական վիճակի

էական փոփոխություն: Այդ է պատճառը, որ օրենսդրությամբ մահմանվում են ոչ միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցումների կարգը, այլև որոշվում է այն մարմինների շրջանակը, որոնք իրավասու են կատարել նման գրանցումներ:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցումներն ունեն կարևոր իրավաբանական նշանակություն: Դրանք վկայում, փաստաթղթավորում են այն հանգամանքները, որոնք հանդիսանում են այդ հանգամանքների մասին ապացուցման աղբյուր:

Մեր նպատակը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին ամբողջական մեմագրություն գրելը չէ, որն ընդգրկեր այդ մարմինների գործունեության բոլոր կողմերը: Սակայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների¹ գործունեության հետ կապված բազմաթիվ հարցեր, հատկապես այդ առթիվ օրենսդրական հարցերն այսօր ենթակա են պարզաբանման բնակչության լայն զանգվածներին, քանի որ նոր օրենսդրությամբ դրանք հիմնականում նոր լուծումներ են ստացել:

Հեղինակը ՀՀ ընտանեկան օրենսգրքի և քաղաքացիական կացության ակտերի մասին ՀՀ օրենքի հարցերը ներկայացնում է ոչ միայն կիրառական նշանակության տեսակետից, այլև պարզաբանում է նրանց հետ առնչվող տեսական որոշ հարցեր: Օրինակ, աշխատության մեջ լուսաբանվում է այն հարցը, թե ո՞րն է համարվում իրավաստեղծ պահը որդեգրման դեպքում՝ որդեգրման վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնե՞լը, թե այդ վճռի հիման վրա քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմնում համապատասխան գրառում կատարելը: Բացի դրանից, քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում ոչ միայն մեմագրական աշխատանք, այլև հանրամատչելի գրքույկ անգամ լույս չի տեսել: Կարճ ասած՝ այդ ուղղությամբ աշխատանքը դուրս չի եկել տարբեր լրագրե-

¹ «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները» բառերի փոխարեն այսուհետև կօգտագործվի «ՔԿԱԳ մարմիններ» կրճատ ձևը: ՔԿԱԳ մարմիններն ազգաբնակչությանը հայտնի են ռուսերենից վերցված ՉԱԳՍ անունով:

րում ու ամսագրերում իրավա բանական խորհրդատվության կարգով հարցերին թուցիկ ձևով պատասխանելու շրջանակից:

Հեղինակը փորձել է վերհանել և ընթերցողներին ներկայացնել Հայաստանի Հանրապետության դատական և ՔԿԱԳ մարմինների պրակտիկան պարզաբանող հարցերի վերաբերյալ, սահմանազատելով դատական ու ՔԿԱԳ մարմինների իրավասությունները, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրքերում ուղղումներ ու լրացումներ կատարելու, ծննդի, ամուսնության, ամուսնալուծության, որդեգրման մասին գրանցումները վերականգնելու վերաբերյալ այդ մարմինների իրավասությունները:

Պետական մարմիններում գրանցման ենթակա քաղաքացիական կացության ակտերը մարդկանց կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններ են: Ուստի դրանք պետք է անպայման գրանցվեն պետական իրավասու մարմնում, քանի որ դրանք անհրաժեշտ են ոչ միայն հոգուտ պետության ու հասարակության, այլև հոգուտ քաղաքացիների շահերի: Բացի այդ, եթե ուշադրություն դարձնենք այդ դեպքերից ու փաստերից յուրաքանչյուրի վրա, ապա կարող ենք տեսնել, որ դրանք բոլորն էլ բնութագրում են մարդու քաղաքացիական կացությունը: Ուստի նշված դեպքերի ու փաստերի գրանցումը գրանցամատյաններում ստացել է «քաղաքացիական կացության ակտերի գրանցում» անվանումը:

Միայն այդպիսի գրանցումներ կատարելուց հետո է, որ քաղաքացիների մոտ ի հայտ են գալիս, փոփոխվում կամ դադարում են որոշակի իրավունքներ ու պարտականություններ, մասնավորապես ընտանեկան, կենսաթոշակային, իրավունքներին, ժառանգմանը վերաբերող և այլն: Քաղաքացիական կացության ակտերի գրանցումները հաստատում են ոչ միայն քաղաքացիների ընտանեկան դրությունը, այլև ազգակցական հարաբերությունները (օրինակ, պապի ու թոռան, եղբոր ու քրոջ և այլն): Քաղաքացիական կացության ցանկացած ակտի գրանցման մասին ՔԿԱԳ մարմինների տված վկայականը իրավաբանական փաստաթուղթ է, որն իրավաբանորեն վավերացնում է այս կամ այն իրադարձությունը և չի պահանջում լրացուցիչ հաստատում: Սակայն կասկածի կամ անվստահության դեպքում այն կարող է վիճարկվել միայն դատական կարգով:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցումները իրավաբանական նշանակությունից բացի, ունեն նաև ժողովրդագրական նշանակություն², քանի որ այդ գրանցումները բնակչության աճն ու սումմասիրելու հիմք են ծառայում: Մասնավորապես դրանք պարտադիր կարգով հաշվի են առնվում տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրերի մշակման ժամանակ, արդյունաբերական և այլ տնտեսական օբյեկտների կառուցման գործը պլանավորելիս, մանկամուրներ, մանկապարտեզներ, նախադպրոցական այլ հաստատություններ, դպրոցներ, քոլեջներ, տեխնիկումներ, բուհեր, հիվանդանոցներ, մշակույթի օբյեկտներ, գրադարաններ և նման օբյեկտներ կառուցելիս:

Դրանց հետ միաժամանակ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները կարևոր խնդիրներ են կատարում երկրում օրինականության ապահովման, քաղաքացիների օրինական իրավունքների, ինչպես նաև պետության շահերի պահպանման ու պաշտպանության գործում:

Նախքան Հայաստանի երրորդ Հանրապետության ձևավորումը երկրում քաղաքացիական կացության ակտերի գրանցումն իրականացվում էր Խորհրդային Միության, այսինքն՝ միութենական օրենսդրության հիման վրա կազմված հանրապետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ Հայկական ԽՍՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքերով, այդ օրենսգրքերի հիման վրա ընդունված այլ օրենսդրական ակտերով, Հայաստանի կառավարության կողմից հաստատված քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին կանոններով ու արդարադատության նախարարի հրամանով հաստատված հրահանգչական ու մեթոդական նամակներով:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կացության ակտերի գրանցումներն իրականացվում են բացառապես Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից ընդունված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության սահմա-

² Ժողովրդագրությունը վիճակագրության բաժին է, որն ուսումնասիրում է ազգաբնակչության կառուցվածքը, քանակն ու աճը:

նադրությամբ, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով, «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հանրապետության կառավարության կողմից ընդունված որոշումներով, ՀՀ արդարադատության նախարարության հրահանգչական բնույթի նամակներով, միջազգային պայմանագրերով և այլ նորմատիվային ակտերով:

Իր իրավական բնույթով քաղաքացիական կացության ակտերը համարվում են իրավաբանական փաստեր: Դրանցից ոմանք համարվում են դեպքեր, մյուսները՝ հանդես են գալիս որպես գործողություններ: Օրինակ քաղաքացու ծնունդը և մահը համարվում են դեպքեր, իսկ ասենք ամուսնության կնքումը, ամուսնալուծությունը, որդեգրումը, հայրության որոշումը, անվան, ազգանվան, հայրանվան փոխումը համարվում են գործողություններ:

Եթե համապատասխան դեպքի հետ կապվում է իրավունքների ու պարտականությունների առաջացում, փոփոխում կամ դադարում, ապա իրավունքի առաջացման պահ է համարվում համապատասխան դեպքի առաջացման պահը և ոչ թե նրա գրանցման պահը: Այս կանոնը կապվում է անձի ֆիզիկական և իրավաբանական վիճակների փոխկապակցվածության հետ: Այսպես, քաղաքացու մահվան դեպքում նրա իրավունակությունը, այսինքն՝ իրավունքներ ու պարտականություններ ունենալու ունակությունը դադարում է նրա մահվամբ, իսկ ծնվելու դեպքում այդ ունակությունն առաջանում է ծնվելու պահից և ոչ թե ծննդի գրանցման պահից:

Ի տարբերություն դրա, մարդկանց գործողությունների հետևանք հանդիսացող իրավունքների ու պարտականությունների առաջացման պահ հանդիսանում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրքերում համապատասխան գրանցում կատարելու ժամանակը: Օրինակ, ամուսնությունը գրանցվում է ամուսնացողների կողմից ՔԿԱԳ մարմնին դիմում տալուց մեկ ամիս հետո:

Առանձին դեպքերում, սակայն, իրավունքների ու պարտականությունների առաջացումը, փոփոխումը և դադարումը օրենքը կարող է ոչ թե քաղաքացիական կացության ակտի գրանցման հետ, այլ որևէ այլ ժամանակի հետ: Օրինակ, որդեգրման հարաբերու-

յուններն առաջանում են որդեգրման վերաբերյալ դատարանի կացրած վճռի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

Իրական կյանքում հաճախ համապատասխան իրավունքների ու պարտականությունների առաջացման, փոփոխման կամ դադարման, կամ նրա վավերականության համար պահանջվում է, որ ակտային գրառումները հանդես գան օրենքով նախատեսված գործողությունների հետ, այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է իրավաբանական փաստերի համակցություն՝ փաստական կազմ: Օրինակ, ամուսնության կնքման համար անհրաժեշտ է ամուսնանալ ցանկացող անձանց փոխադարձ համաձայնությունը, նրանց ամուսնական տարիքի հասած լինելը և այլն:

Քաղաքացիական կացության ակտերի և դրանց գրանցման հետ կապվում են ոչ միայն ընտանեկան իրավունքների ու պարտականությունների առաջացումը, փոփոխումը և դադարումը, այլև այլ իրավունքներ ու պարտականություններ: Այսպես, ծննդի հետ անմիջապես կապվում է չափահասության վրա հասնելը: Անձը ձեռք է բերում քաղաքացիական լրիվ գործունակություն, այսինքն՝ դառնում է ունակ՝ իր գործողություններով իր համար ստեղծելու իրավունքներ և կրելու պարտականություններ: Իսկ Երկրի հիմնական օրենքի՝ ՀՀ սահմանադրության համաձայն ՀՀ քաղաքացիները ձեռք են բերում քաղաքական, աշխատանքային և այլ իրավունքներ:

Իսկ ահա քաղաքացու անունը, ազգանունը, հայրանունը փոխելը այնպիսի ակտ է, որ անհատականացնում է մարդուն որպես իրավունքի սուբյեկտի, միաժամանակ ըստ բնակության, ուսման, աշխատանքի վայրի համապատասխան կազմակերպություններին պարտավորեցնում է որոշակի գործողությունների կատարման, ասենք՝ նրան տալ նոր փաստաթղթեր փոխված անվանը, ազգանվանը, հայրանվանը համապատասխան:

Որդեգրման ակտի գրանցումը վկայում է որդեգրողների ու որդեգրվածի միջև ընտանեկան և քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների առաջացման մասին, միաժամանակ երեխայի հարազատ ծնողների և ծագումով մյուս ազգականների միջև համապատասխան իրավունքների ու պարտականությունների դադարեցման մասին (Ընտօր. 132 հոդվ.):

Ընտանանեկան իրավահարաբերությունների համար կարևորագույն նշանակություն ունեցող դեպքերն ու գործողությունները կարող են հանդես գալ որպես իրավաստեղծ, իրավափոփոխող և իրավադադարեցնող փաստ: Քաղաքացիական կացության ակտ հանդիսացող ամեն մի հանգամանք կարող է միաժամանակ հանդես գալ տարբեր որակներով: Այսպես, երեխայի ծննդով առաջանում են ծնողների ու զավակների փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները: Այն իրավաստեղծ փաստ է: Բայց և միաժամանակ անձի մոտ կարող է առաջանալ նրա ստանալիք ալիմենտի չափի փոփոխման իրավունք: Այն իրավափոփոխող փաստ է: Քաղաքացու մահվան դեպքում նրա ունեցած գույքի նկատմամբ բացվում է ժառանգություն: Սա նույնպես իրավաստեղծ փաստ է: Բայց միաժամանակ էլ դադարում է մահացածի երեխայի ալիմենտ ստանալու իրավունքը:

Վերջում ավելացնենք, որ համապատասխան դեպքերն ու գործողությունները գրանցող ակտային գրառումները, որպես կանոն, համարվում են քաղաքացիական կացության ակտի հավաստիության անվիճելի ապացույց: Ակտային գրառման մեջ արտացոլված հանգամանքի վկայության համար չի պահանջվում որևէ լրացուցիչ ապացույց: Տվյալ հանգամանքի մասին ակտային գրքերում գրառման փաստը և նրա հիման վրա տրված փաստաթուղթը (Վկայականը) ինքնին անվիճելիորեն ապացուցում են նրա իրական լինելը, դրա հետ միաժամանակ՝ այդ փաստի վրա հիմնված իրավունքների ու պարտականությունների իրական լինելը: Օրինակ, օրենքով նախատեսված պայմանների առկայության դեպքում ամուսնուց արուստի միջոց՝ ալիմենտ պահանջելու համար բավական է ի թիվս օրենքով նախատեսված այլ փաստաթղթերի, ներկայացնել նաև ամուսնության վկայականը (Ընտօր. 77-80 հոդվ.):

ԳԼՈՒԽ 1. ԱՄՈՒՆԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

§ 1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության զարգացումը

Հայաստանի Հանրապետությունում ամուսնական և ընտանեկան հարաբերու թյունները կարգավորվում են բացառապես պետության կողմից: Այդ հարաբերությունների կարգավորման նպատակով ստեղծված են հատուկ պետական մարմիններ, որոնք իրականացնում են քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ: Նման մարմիններ ստեղծվել են Հայաստանում պետականության վերականգնման շնորհիվ, անցած դարի 20-ական թվականներին: Սակայն այդ նպատակի համար ստեղծված օրենսդրությունը բնականաբար միանգամից չի ընդունվել:

Հայաստանի առաջին Հանրապետության երկուսուկես տարիների ընթացքում ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտեր չընդունվեցին: Հայաստանում կիրառման դրվեց Ցարական Ռուսաստանի օրենսդրությունը, այդ թվում՝ ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորող նորմերը: Մակայն երբ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվեցին, երկրում ամուսնաընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորման հիմնական խնդիրը դարձավ նոր, սոցիալիստական ընտանիքի հաստատումն ու ամրապնդումը, քաղաքացիների քաղաքացիական կացության նորովի որոշումը: Այդ խնդրի իրականացման գործում կյանքը թելադրեց ամուսնա-ընտանեկան հարաբերությունների մանրամասն կարգավորման անհրաժեշտությունը, իսկ դրանում խոշոր դեր խաղաց Խորհրդային Ռուսաստանի արդեն ձևավորված ընտանեկան օրենսդրությունը: Մինչ այդ Համառուսաստանյան Կենտգործկոմը 1918 թ. սեպտեմբերի 16-ին ընդունել էր «Քաղաքացիական կացության ակտերի, ամուսնական, ընտանեկան և խնամակալական իրավունքի օրենսգիրքը», որն էլ կիրառման դրվեց նաև Խորհրդային Հայաստանում: Այդ օրենսգիրքն ըստ

էութեան ընդգրկում էր ընտանեկան իրավունքի բոլոր հարցերը, ընտանեկան հարաբերությունների բոլոր բնագավառները: Այդ օրենսգրքի առաջին բաժինը (1–51 հոդվածները) նվիրված էր քաղաքացիական կացության ակտերին: Ընդհանրապես օրենսգրքի այդ հատվածն ընտանեկան իրավունքին առնչվում էր միայն անուղղակի, քանի որ նյութաիրավական նորմեր չէր պարունակում և միայն սահմանում էր քաղաքացիական կացության ակտերի գրանցման կարգը, այսինքն ուներ արարողակարգային բնույթի նորմեր: Բայց և այնպես այդ հատվածը դրված էր առաջին պլանի վրա և օրենսգրքի անվանումն էլ ընդգրկում էր նաև քաղաքացիական կացության ակտերը:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից օրեր անց, Հայաստանի հեղկոմը 1920 թ. դեկտեմբերի 21-ին ընդունեց դեկրետ Ռուսական կայսրության «Հավաք օրինացր» վերացնելու և ՌԽՖՍՀ դեկրետների պարտադրականության մասին»³, որով սահմանվեց, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում գործող օրենքներ համարվում են Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության օրենքները այն փոփոխություններով ու լրացումներով, որ կմտցնեն Հայաստանի հեղկոմը և այլ իրավասու իշխանություններ» (կետ 2): Հասկանալի է, որ խոսքը վերաբերում էր նաև ՌՍՖՍՀ 1918 թ. ընտանեկան օրենսգրքին: Այս օրենսգրքում ընդգծվում էր ոչ միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման ժողովրդագրական, այլև գլխավորապես՝ քաղաքական նշանակությունը:

ՌԽՂադրության արժանի է այն հանգամանքը, որ Խորհրդային Ռուսաստանը դեռևս չունենալով նոր քաղաքացիական օրենսգիրք, առաջին հերթին ընդունեց ընտանեկան օրենսգիրքը: Բանն այն է, որ 1918թ. Ռուսաստանում ռազմական կոմունիզմ էր, գործնականում ողջ սեփականությունն ազգայնացված էր, քաղաքացիական շրջանառություն գրեթե գոյություն չուներ: Գործում էին վարչահրամայական բաշխման հարաբերություններ: Այդ պայմաններում անհրաժեշտ էր ընտանեկան հարաբերությունները կարգավորել նորովի,

³ Տե՛ս «Ժամանակագրական ժողովածու, 1920-1938 թթ.», Երևան, 1963 թ., էջ 21:

ուստի առաջին հերթին ընդունվեց Ռուսաստանի նոր ընտանեկան օրենսգիրքը, չունենալով քաղաքացիական օրենսդրություն: ՌՍՖՍՀ ընտանեկան օրենսգիրքն ազդարարում էր ամուսնության և ընտանիքի բնագավառում տղամարդու ու կնոջ լիակատար իրավահավասարությունը, արտամուսնական կապերի հետևանքով ծնված երեխաների իրավունքները բոլոր բնագավառներում հավասարեցվեցին ամուսնությունից ծնված երեխաների իրավունքներին ու պարտականություններին: Երկրում ճանաչվեց միայն քաղաքացիական ամուսնությունը, այսինքն՝ միայն պետական մարմիններում արձանագրված ամուսնությունը:

Քաղաքացիական ամուսնություններին հավասարեցվեցին մինչեղևափոխական Ռուսաստանում գոյություն ունեցող օրենքներին համապատասխան կնքված ամուսնությունները:

Խորհրդային Ռուսաստանի նոր ընտանեկան օրենսգրքի առաջին բաժինը կրում էր «Քաղաքացիական կացության ակտեր» անվանումը, որի 1-51 հոդվածների նորմերը մանրամասն կարգավորում էին քաղաքացիական կացության կարևորագույն ակտերը գրանցելու կարգն ու պայմանները:

Խորհրդային Հայաստանում ՌՍՖՍՀ օրենսդրության կիրառման հետ միաժամանակ ընդունվեցին նաև սեփական իրավական ակտեր: Այսպես, Հայհեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 21-ի հայտնի դեկրետի ընդունումից բառացիորեն երկու օր հետո, դեկտեմբերի 23-ին Հայաստանում ընդունվեց Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին դեկրետ, որի հիման վրա կազմավորվեցին քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններ և քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործը վերցվելով եկեղեցական մարմինների իրավասությունից, հանձնվեց Հայհեղկոմների համապատասխան բաժիններին: Դեկրետով կազմվեցին քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններ: Հայաստանի Կառավարությունը՝ Ժողկոմխորհը 1924 թ. դեկտեմբերի 8-ին ընդունեց դեկրետ «Ամուսնացողների ցուցակագրության կարգի մասին»⁴, որը գործնական նշանակության իրավական ակտ էր:

⁴ Տե՛ս «Ժամանակագրական ժողովածու, 1920-1938 թթ.», Եր. 1963 թ., էջ 218-219:

Այդ դեկրետի համաձայն ամուսնացող անձանց ցուցակագրությունը քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության բաժինների կողմից կատարվում էր միայն բժշկական հանձնաժողովներից վկայական ներկայացվելուց հետո: Այդ հանձնաժողովները պետք է վեներական, հոգեկան և այլ խրոնիկական ու անբուժելի հիվանդություններով տառապող քաղաքացիների ամուսնանալու ժամանակ կողմերին նախազգուշացնեին հետևանքների մասին: Այդ որոշմամբ (կետ 3) ամուսնությունը թույլատրվում էր 18 տարեկանից բարձր տարիքի տղամարդկանց և 15 տարեկանից բարձր տարիքի կանանց:

ՌԻՀաղորդության արժանի է նաև Հայաստանի Կենտրոնական և Ժողովրդավարական 1926 թ. սեպտեմբերի 8-ի որոշումը «Քաղաքացիների ազգանուն և անուն փոխելու իրավունքի մասին»⁵: Այդ որոշումը թույլատրում էր 18 տարին լրացած ամեն մի քաղաքացու փոխել իր ազգանունը (տոհմանունը) և անունը, եթե այդ չի շոշափում երրորդ անձանց իրավունքները, միաժամանակ նախատեսում էր քաղաքացու ազգանունը և անունը փոխելու իրավական որոշ հետևանքներ:

Հայկական ԽՍՀ-ի համար 1920-ական թվականները համարվում էին երկրի առջև անխուսափելիորեն առաջացած տնտեսական դժվարությունները հաղթահարելու տարիներ: Այդ դժվարությունները հաղթահարելուց հետո անցնելով խաղաղ շինարարական աշխատանքներին, անհրաժեշտություն առաջացավ ընդունել ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորող սեփական օրենսգիրք: Եվ Հայկական ԽՍՀ 5-րդ գումարման կենտրոնական 2-րդ նստաշրջանը 1927 թ. սեպտեմբերի 18-ին ընդունում է «Հայկական ԽՍՀ ամուսնության, ընտանիքի և խնամակալության օրենսգիրքը», որը գործողության մեջ դրվեց 1927 թ. նոյեմբերի 1-ից:

Հայաստանի նոր ընտանեկան օրենսգիրքը կազմվել էր, հաշվի առնելով ինչպես մինչ այդ եղած օրենսդրության կիրառման անցած տարիների փորձը, այնպես էլ կյանքի թելադրած պահանջները: Ընտանեկան օրենսգրքի 5-րդ բաժինը վերնագրված էր «Քաղաքացիական կացության ակտերի տոմարագրությունը», որն ընդգրկում

էր 114-145 հոդվածները: Բաժինը տեղադրված էր օրենսգրքի վերջում, որն սկզբունքորեն ճիշտ էր, քանի որ նրանում հիմնականում պարունակում էին գուտ հրահանգչական բնույթի նորմեր:

Հայկական ԽՍՀ 1927 թ. ընտանեկան օրենսգիրքն ընդունելուց հետո Խորհրդային Միությունում հաճախ է անդրադարձ եղել քաղաքացիական կացության ակտերի գրանցման հարցերին: Ընդունվել են տարաբնույթ նորմատիվային ակտեր, որոնց հիման վրա համապատասխան փոփոխություններ են կատարվել Հայկական ԽՍՀ նորմատիվային ակտերի մեջ, մասնավորապես Հայկական ԽՍՀ ամուսնության, ընտանիքի և խնամակալության օրենսգրքում: Օրինակ, Հայկական ԽՍՀ կառավարությունը ընդունել է որոշում, ուղղված քաղաքացիական կացության ակտերի գրանցումը կարգավորելու գործին: Տվյալ պատմաշրջանում Հայկական ԽՍՀ-ում քաղաքացիական կացության ակտերի գրանցման պարտականությունը դրված էր Աշխատավորների դեպուտատների շրջանային ու քաղաքային սովետների գործադիր կոմիտեներին կից ստեղծված մարմինների՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների վրա, որոնց անվանումն այդպես էլ առանց հայերեն թարգմանվելու վերարտադրվեց հայերենում՝ որպես ՉԱԳՍ-ի բաժիններ: Իսկ ՉԱԳՍ-ը քաղաքացիական կացության ակտերի գրանցումն է, այժմ արդեն հայերեն՝ ՔԿԱԳ:

Խորհրդային Միությունում անցած դարի 60-ական թվականներին իրականացված ընտանեկան օրենսդրության նոր կողմնափոխումն առաջնություն էր ընտանեկան նոր օրենսգիրքն ընդունեց նաև Հայկական ԽՍՀ-ն: Հայկական ԽՍՀ յոթերորդ գումարման Գերագույն խորհրդի 5-րդ նստաշրջանը 1969 թ. հուլիսի 18-ին ընդունեց «Հայկական ԽՍՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրք»: Նոր օրենսգիրքը գործողության մեջ դրվեց 1970 թ. հունվարի 1-ից:

Հայկական ԽՍՀ 1969 թ. ամուսնության և ընտանիքի օրենսգրքի չորրորդ հատվածը կրում էր «Քաղաքացիական կացության ակտեր» անվանումը և ընդգրկում էր 180-216 հոդվածները: Այստեղ ամփոփված էին ոչ միայն նյութական իրավունքի նորմեր (քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցման

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 237-238:

ենթակա կացությունները, դրանց գրանցման սկզբունքները), այլև գրանցումների արարողակարգային կանոններ:

Ներկայումս ՔԿԱԳ մարմինները գործում են որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ: «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ 2004 թ. դեկտեմբերի 8-ի օրենքի⁶ 4-րդ հոդվածի համաձայն ՀՀ-ում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները, ինչպես նաև դրանցում փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ կատարելը, այդ գրանցումները չեղյալ հայտարարելը, կորած գրանցումները վերականգնելը, քաղաքացիական կացության ակտերի մատյանները վարելը կամ պահպանելը և վկայականների կրկնօրինակներ ու քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումը հաստատող այլ փաստաթղթեր տալը իրականացնում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինները: Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների հետ կապված գործունեությունը համակարգում և վերահսկում է Հայաստանի հանրապետության արդարադատության նախարարությունը՝ կառավարության սահմանած կարգով: Նշանակում է ՀՀ-ում ՔԿԱԳ մարմինների մեթոդական ղեկավարությունն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը: Այդ նպատակով նախարարության համակարգում գործում է քաղաքացիական կացության ակտերի գործակալությունը (այսուհետև՝ Գործակալություն): Այստեղ պարզապես հիշեցնենք, որ Հայաստանի արդարադատության նախարարի հրամանով 1986 թ. օգոստոսի 29-ին հաստատվել է հրահանգ «Հայկական ԽՍՀ Չագախ մարմինների կողմից որդեգրումը գրանցելու հարցերի վերաբերյալ»:

Հետագայում 1987 թ. փետրվարի 2-ին Հայաստանի Կառավարությունը հաստատել է «Հայկական ԽՍՀ-ում քաղաքացիական կացության ակտերի գրանցման կարգի մասին» հրահանգը, արարողակարգային հարցերի ընդարձակ ընդգրկումով:

Այնուամենայնիվ որքան էլ պետական իրավասու մարմինների կողմից ընդունվեին ենթաօրենսդրական տարաբնույթ ակտեր,

⁶ Այսուհետև՝ «Օրենք»:

կյանքը թելադրում էր քաղաքացիական կացության ակտերի վերաբերյալ ընդունել օրենսդրական ակտերի փաթեթ, կամ ամբողջական օրենք, հարցերի բազմակողմանի կարգավորման նպատակով:

Առանց այն էլ Հայաստանի երրորդ Հանրապետությունը հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման նոր ելակետներ և ուղղություններ մշակեց, որը հասցրեց գործող օրենսդրության սկզբունքային փոփոխությունների:

Հայաստանի Հանրապետությունում 1995 թ. հուլիսի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը դարձավ այն իրավական բազան, որի վրա պետք է ձևավորվեր նոր Հայաստանի նոր օրենսդրությունը: Երկրի հիմնական օրենքի հիման վրա ընդունվեցին հանրապետության գրեթե բոլոր օրենսգրքերը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգիրքը: Պատահական չէ, որ այդ օրենսգիրքը համարում ենք գործող ընտանեկան օրենսդրության ընդարձակ զանգվածի «միջուկը»: ՀՀ Ընտանեկան օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2004 թ. նոյեմբերի 9-ին և գործողության մեջ է դրվել 2005 թ. ապրիլի 20-ից:

ՀՀ Ընտանեկան օրենսգրքի կառուցվածքը մի փոքր տարբերվում է Հայաստանի 1969 թ. ամուսնության և ընտանիքի օրենսգրքի կառուցվածքից: Մասնավորապես նրանում բացակայում է «Քաղաքացիական կացության ակտեր» բաժինը: Անհրաժեշտ է համարվել նյդ առթիվ ընդունել Հայաստանի Հանրապետության առանձին օրենք: Եվ իրոք, «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն⁷ ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2004 թ. դեկտեմբերի 8-ին և գործողության մեջ է դրվել 2005 թ. ապրիլի 20-ից: Մեծ է այդ օրենքի դերը Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից ՀՀ ընտանեկան օրենսդրությունը ճշտորեն ընկալելու և այդ մարմինների գործունեության միասնական պրակտիկա ունենալու գործում:

⁷ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թ. դեկտեմբերի 8-ին ընդունված օրենքում փոփոխություններ ու լրացումներ են կատարվել ՀՀ 2006 թ. մայիսի 23-ի օրենքով:

Քաղաքացիական կացության ակտերի մասին ՀՀ օրենքի ընդունումից հետո այդ օրենքի իրագործման նպատակով ՀՀ կառավարությունն ընդունել է զանազան որոշումներ, որոնցով հաստատվել են նորմատիվային մի քանի ակտեր: Այսպես, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2005 թ. ապրիլի 14- ին ընդունել է թիվ 492 որոշումը, որով հաստատվել է քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձևաթղթերի լրացման կարգը, քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձևաթղթերի, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրառման դիմումի ձևաթղթերի նմուշները: Հայաստանի Հանրապետության կառավարության նույն օրվա մեկ այլ, թիվ 469 որոշմամբ հաստատվել է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների վկայականների լրացման կարգը, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների վկայականների նմուշները, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման փաստը հաստատող ձևաթղթերի նմուշները:

Ի կատարումն «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 58 հոդվածի 5- ռդ մասի պահանջների ՀՀ կառավարությունը 2005 թ. հունիսի 23-ի թիվ 941 որոշմամբ հաստատել է քաղաքացիների կողմից անվան փոխման կարգն ու պայմանները, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնման կարգը:

Քաղաքացիական կացության ակտերի մասին ՀՀ օրենքի առկայության պայմաններում կարծում էինք կպակասեն հրահանգչական բնույթի տարբեր ցուցումները, որ հաճախակի ընդունվում էին հանրապետության արդարադատության նախարարի հրամանով: Սակայն Հայաստանի Հանրապետության արդարա դատության նախարարը ղեկավարվելով «Քաղաքացիական կացության ակտերի մասին» օրենքի 80-րդ հոդվածով, 2005 թ. հուլիսի 2-ի թիվ 96 հրամանով, հաստատել է քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ վկայականների կրկնօրիակների և տեղեկանքների տրման կարգը և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյանների ձևերը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման դիմումների հաշվառման մատյանի ձևը, ծննդի գրանցման դիմումների հաշվառման մատյանի ձևը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման

տեղեկանքների վերաբերյալ դիմումների հաշվառման մատյանի ձևը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականների ելքի հաշվառման մատյանի ձևը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ժամանակ պետք է ճշտորեն պահպանվեն ինչպես գրանցման ընդհանուր կանոնները, այնպես էլ յուրաքանչյուր ակտի գրանցման համար սահմանված գրանցման առանձնահատուկ կանոնները:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործունեության սկզբունքներից հիմնականը **երկրում օրինականության պահպանումն** է, պետական շահերի, երկրի քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանությունը: Օրենքի ամեն մի, թեկուզ աննշան համարվող խախտում կարող է հանգեցնել բացասական հետևանքների (եթե ոչ գրանցման պահին, ապա հետագայում), էական վնաս պատճառել պետության ու հասարակության շահերին, քաղաքացիների իրավունքներին և օրենքով պահպանվող շահերին⁸: Քաղաքացիները ևս պետք է պահպանեն այն բոլոր կանոնները, որ սահմանված են քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար: Օրենսդրությամբ սահմանված կանոնների ճշգրիտ պահպանումը քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի, ինչպես նաև պետության ու հասարակության շահերի ապահովման կարևորագույն պայմանն է:

Մեծ է կատարված գրանցումների փաստական ձևակերպման նշանակությունը: Ինչպես տեսանք, հաստատված են ինչպես քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրքերի, այնպես էլ ՔԿԱԳ մարմինների կողմից տրվող վկայականների ձևերը: Եվ որպեսզի համապատասխան ակտի գրանցումն ու դրան համապատասխան տրվող վկայականն ունենան իրավաբանական ուժ ու նշանակություն, պետք է լրացվեն ներկայացվող պահանջներին համապատասխան: Ինչպես քաղաքացիական կացության ցանկացած ակտի գրանցման մեջ, այնպես էլ վկայականներում որևէ անհրաժեշտ տեղեկության, կնիքի, ստորագրության բացակայությունը կարող է էականորեն վնասել քաղաքացիների շահերին նրանց պատ-

⁸ Տե՛ս նաև Վ.Ա. Գրաչովա, Քաղաքացի դիմում է Ջագս, «Հայաստան» հրատ., Եր., 1984 թ., էջ 13:

ճառելով վնասներ, կապված ժամանակի ու միջոցների կորուստների հետ: Քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ կատարելիս և դրանց համապատասխան վկայականներ տալիս չկան և չեն կարող լինել մանրութներ: Այստեղ կարևոր է ամեն ինչ:

Քաղաքացիական կացության ցանկացած ակտի գրանցման համար դիմումատուն պետք է ներկայացնի իր ինքնությունը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր, ինքնությունը հաստատող վկայական, զինվորական գրքույկ, դիվանագիտական փաստաթուղթ, ինչպես նաև գրանցման ենթակա փաստը հավաստող փաստաթղթեր, ասենք՝ երեխայի ծնունդը վկայող բժշկական տեղեկանք կամ քաղաքացու մահվան մասին բժշկական եզրակացություն և այլն:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների համար, օրենքով նախատեսված դեպքերում, դիմումատու անձը՝ քաղաքացի, թե իրավաբանական անձ, պետք է վճարի պետական տուրք «Պետական տուրքի մասին» ՀՀ 1997 թ. դեկտեմբերի 27-ի օրենքով (հետագայում նրանում արված փոփոխություններով ու լրացումներով) սահմանված դեպքերում ու չափերով ⁹:

Այդ օրենքի 12 հոդվածի համաձայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար սահմանված են պետական տուրքի հետևյալ չափերը՝

1. ազգանվան, անվան և հայրանվան փոխման համար, ներառյալ վկայական տալը՝ բազային տուրքի հնգապատիկի չափով
2. ամուսնության գրանցման համար, ներառյալ վկայական տալը բազային տուրքի չափով
3. ամուսնալուծության գրանցման համար՝ ներառյալ վկայական տալը բազային տուրքի տասնապատիկի չափով
4. քաղաքացիական կացության ակտերի գրանցումների փոփոխություն, լրացում և ուղղում կատարելու համար՝ ներառյալ վկայական տալը բազային տուրքի հնգապատիկի չափով
5. քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին վկայականների կրկնօրինակը տալու համար բազային տուրքի եռապատիկի չափով

⁹ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը տես «Հայաստանի Հանրապետության Պաշտոնական Տեղեկագիր», թիվ 1, 11 հունվարի 1998թ.

6. հայրություն (մայրություն) ճանաչելու համար բազային տուրքի չափով

7. օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից երեխայի որդեգրում գրանցելու համար երեսնապատիկի չափով

8. քաղաքացիական կացության ակտերի գրանցումները վերականգնելու համար, ներառյալ՝ վկայականներ տալը բազային տուրքի եռապատիկի չափով

9. քաղաքացիական կացության ակտերի գրանցման առկայության կամ բացակայության մասին տեղեկանք տալու համար բազային տուրքի կրկնապատիկի չափով

10. քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի կրկնօրինակ կամ տեղեկանքն ստանալու ծանուցում ՀՀ տարածքում ուղարկելու համար բազային տուրքի չափով

11. օտարերկրյա պետություններից քաղաքացիների դիմումի համաձայն նրանց վերաբերյալ քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի կրկնօրինակ կամ տեղեկանք ստանալու համար բազային տուրքի կրկնակի չափով

12. Ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանք տալու համար բազային տուրքի չափով

13. քաղաքացիական կացության ակտերի գրանցման մեջ ուղղում, լրացում, փոփոխություն կրկնապատիկի կատարելու վերաբերյալ տեղեկանք տալու համար բազային տուրքի չափով

Վերջում ավելացնենք, որ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից (բաժնից) դուրս կատարվող քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքը գանձվում է տասնապատիկի չափով:

§ 2. Հայաստանի Հանրապետության ընդհանրական օրենսգիրքը

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը 2004 թ. նոյեմբերի 9-ին ընդունել է երկրում ամենակիրառելի, մեր բոլորի ընտանիքների համար խիստ անհրաժեշտ օրենքը՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքը¹⁰, որը ՀՀ նախագահի կող-

¹⁰ Այսուհետև՝ «Ընտօր.»:

մից ստորագրվել է 2004 թ. դեկտեմբերի 9-ին: ՀՀ Ազգային ժողովը սակայն այդ օրենսգիրքը գործողության մեջ դնելու վերաբերյալ առանձին օրենք չընդունեց: Պարզապես օրենսգրքի 153 հոդվածով սահմանեց, որ «սույն օրենսգիրքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո»: Եվ քանի որ այն պաշտոնապես հրապարակվեց Հայաստանի Հանրապետության Պաշտոնական տեղեկագրում 2005 թ. հունվարի 19-ին (տես թիվ 4 (376) համարը), ուստի այն ուժի մեջ մտավ 2005 թ. ապրիլի 20-ից:

Մինչև այդ օրենսգրքի գործողության մեջ մտնելը ՀՀ-ում գործում էր Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1969 թ. հուլիսի 18-ին ընդունված և 1970 թ. հունվարի 1-ից գործողության մեջ մտած «Հայկական ԽՍՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրք»:¹¹ Այն իր ժամանակի պահանջներին համապատասխանող և բավականին ընդգրկուն ու հաջողված օրենսգիրք էր: Սակայն նրա կիրառման երեքուկես տասնամյակի ընթացքում հարկ եղավ նրանում կատարել էական փոփոխություններ, լրացումներ, բայց ոչ մի հոդված իր ուժը չկորցրեց: Իսկ այս հանգամանքը նշանակում է, որ նրա դրույթներն սկզբունքորեն ճիշտ են եղել և դիմացել են կյանքի փորձություններին: Միայն հարկ է եղել երբեմն կյանքի պահանջներին համապատասխան նոր խմբագրման ենթարկել առանձին հոդվածներ կամ ավելացնել նոր դրույթներ: Այդ է պատճառը, որ Հայաստանի նոր ընտանեկան օրենսգրքի հիմքում ընկած են 1969 թ. ամուսնության և ընտանիքի օրենսգրքի շատ դրույթներ:

Իհարկե, կարող է հարց ծագել, թե հնարավոր չէ՞ր էական փոփոխություններ կատարել 1969 թվականի արդեն կյանքի քննությանը դիմացած օրենսգրքում և ոչ թե ընդունել նոր օրենսգիրք: Ոչ, այդպես վարվելը ճիշտ չէր լինի: Ահա թե ինչու:

Նախ, Հայկական ԽՍՀ 1969 թ. ամուսնության և ընտանիքի օրենսգրքի իրավական մակարդակն արդեն չէր համապատասխանում երկրի հիմնական օրենքի՝ ՀՀ սահմանադրության պահանջներին: Այն ընդունվել էր Խորհրդային Միության տարիներին, որի վրա ուղղակիորեն զգացվում էր տոտալիտար իշխանության շունչը: Երկրորդ, նրանում կային շատ դեկլարատիվ, հռչակագրային բնույթ ունեցող նորմեր, որոնք իրացման մեխանիզմով ապահովված չէին: Երրորդ, այդ օրենսգրքի բոլոր նորմերը կատեգորիկ և պարտավոր

րեցնող էին և թույլ չէին տալիս, որ ընտանիքի անդամները իրենց ցանկության դեպքում, փոխադարձ համաձայնությամբ լուծեին իրենց հուզող գույքային բնույթի առանձին հարցեր: Չորրորդ, անհրաժեշտ էր ընտանեկան օրենսդրությունը համապատասխանեցնել այն միջազգային-իրավական ակտերին, որոնք վավերացվել են Հայաստանի Հանրապետության պաշտամենտի կողմից: Հետևաբար, խոսքը ոչ թե ամուսնության և ընտանիքի օրենսգրքի կոսմետիկ միջամտության մասին էր, այլ ամուսնության և ընտանիքի մասին օրենսդրությունը արմատապես փոփոխելու մասին: Չէ որ ՀՀ նոր սահմանադրությունն ըստ էության հիմնված է շուկայական տնտեսության օրենքների դրույթների վրա:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը ելնում է ՀՀ սահմանադրության 35 հոդվածի այն դրույթից, որ «ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է»:¹² Նոր ընտանեկան օրենսգրքով եվս սահմանվում է, որ երկրում « ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունը»¹³: Այսինքն՝ այսուհետ ևս երկրում չեն ճանաչվելու ոչ փաստական, ոչ էլ եկեղեցական ամուսնությունները: Եվ քանի որ նախատեսվում էր ընդունել նաև առանձին օրենք քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների մասին, ուստի ընտանեկան օրենսգրքում չկան քաղաքացիական կացության ակտերը գրանցելու վերաբերյալ նորմեր: Այսինքն՝ ընտանեկան օրենս-

¹¹ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 22-ին ընդունվել է օրենք «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին», որի 9-րդ հոդվածը վերնագրված է «Ամուսնությունների գրանցումը Հայոց Առաքելական Սուրբ եկեղեցու կողմից» և ազդարարում է, թե Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով սահմանված կարգին համապատասխան Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու կանոնական ծեսերով իրագործած ամուսնություններն ու հռչակված ամուսնալուծությունները (սույն օրենքը տես «Հայաստանի Հանրապետության Պաշտոնական Տեղեկագիր», թիվ 17, 2007, էջ 5-7): Սակայն այսօրվա դրությամբ այդ օրենքի, նրա կիրառման ժամանակի ու կարգի մասին պաշտոնական որևէ պարզաբանում կամ մեկնաբանում չկա ոչ պետական իշխանության, ոչ էլ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու կողմից:

գիրքը բեռնաթափվել է քաղաքացիական կացության ակտերի գրանցմանը նվիրված արարողակարգային բնույթի նորմերից:

Ընտանեկան նոր օրենսդրությամբ սահմանվում են ինչպես ամուսնության պայմանները, այնպես էլ արգելքները: Ըստ որում ամուսնության պայմաններ են համարվում ինչպես ամուսնացողների փոխադարձ ու կամավոր ձևով արտահայտված համաձայնությունը, այնպես էլ նրանց ամուսնական տարիքի հասած լինելը:

Հայաստանի Հանրապետության 1969 թ. ամուսնության և ընտանիքի օրենսգրքի՝ ամուսնության կնքման և դրան արգելք հանդիսացող հանգամանքները նույնպես վերարտադրվել են նոր օրենսգրքով: Սակայն ավելացվել է նոր արգելք. եթե նախկինում արգելվում էր ամուսնությունը մերձավոր ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, հարազատ, ինչպես նաև համամայր ու համահայր եղբայրների ու քույրերի միջև, ապա ներկայումս արգելվում է ամուսնությունը նաև մորաքրոջ, հորաքրոջ, մորեղբոր ու հորեղբոր զավակների միջև: Բնականաբար այս անձանց միջև ամուսնությունն արգելելը հիմնավորվում է զուտ կենսաբանական նկատառումներով: Օրենսգիրքն արգելում է նաև ամուսնությունը որդեգրողի ու որդեգրվածի միջև:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 12 հոդվածի համաձայն ամուսնացող անձինք կարող են պետության հաշվին ենթարկվել բժշկական հետազոտության: Ըստ որում, նման հետազոտության արդյունքները համարվում են բժշկական գաղտնիք և դրանք կարող են հաղորդվել հետազոտություն անցածին և այն անձին, որի հետ նա մտադիր է ամուսնանալ: Սակայն եթե հետազայում պարզվում է, որ հետազոտված անձը մյուս ամուսնուց թաքցրել է ամուսնանալու պահին իր մոտ սեռավարակի, հոգեկան հիվանդության, թմրամոլության առկայության փաստը, ապա մյուս ամուսինն իրավունք ունի պահանջել, որ դատարանն իրենց ամուսնությունը ճանաչի անվավեր:

Նախատեսվում է ամուսնալուծության ինչպես դատական, այնպես էլ վարչական կարգ: ՀՀ ընտանեկան օրենսգրքի ամուսնալուծության վերաբերյալ նորմերն ավելի մանրամասն մենք կվերլուծենք ամուսնալուծությունները քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցելու հարցերը պարզաբանելիս:

Ամուսնության հետևանքով ամուսինների միջև առաջանում են ինչպես անձնական, այնպես էլ գույքային իրավունքներ ու պարտականություններ

Ամուսնությունը ՔԿԱԳ մարմիններում գրանցելիս ամուսնացողներն իրենց ցանկությամբ, կարող են ընտրել ամուսնացողներից մեկի ազգանունը որպես ընդհանուր ազգանուն կամ պահպանել իրենց մինչամուսնական ազգանունը: Ընտանեկան օրենսգիրքը նաև ամուսնացողներին թույլատրում է կրել իրենց երկուսի գծիկով միացված ազգանունները: Սակայն ընդհանուր ազգանունը չի կարող լինել երկու ազգանունից ավելի:

Ամուսինների գույքային հարաբերությունները կարգավորվում են յուրատեսակ ձևով: Առանձին հոդվածով սահմանվում է, որ «Ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով» (26 հոդվ.): Օրենսգիրքն առաջին հերթին նկատի ունի Քաղ.օր. 201 հոդվածը: Մինչդեռ ընդամենը մի քանի դրույթ պարունակող այդ հոդվածն ակնհայտ թերի է ամուսինների համատեղ սեփականության բոլոր հարցերը կարգավորելու համար: Մենք սա համարում ենք ՀՀ ընտանեկան օրենսգրքի լուրջ թերություն: Ուրիշ է արդեն ամուսնական պայմանագիրը: Սա ՀՀ ընտանեկան օրենսգրքի էական նորություններից է: Օրենսգիրքն ամուսիններին, ինչպես նաև ամուսնանալ ցանկացողներին թույլատրում է կնքել հատուկ պայմանագիր, որով նրանց ցանկությամբ յուրատեսակ ձևով կկարգավորվեն իրենց գույքային հարաբերությունները, քան նախատեսվում է քաղաքացիական օրենսդրությամբ:¹² Ի դեպ, ամուսնության պետական գրանցումից առաջ կնքված ամուսնական պայմանագիրն ուժի մեջ է մտնում ամուսնության պետական գրանցման պահից: Եվ չնայած պայմանագիրն անվանվում է «**ամուսնական պայմանագիր**», այնուամենայնիվ նրանով չեն կարող կարգավորվել ամուսինների միջև առաջացող անձնական ոչ-գույքային

¹² Այս և ՀՀ ընտանեկան օրենսգրքի մյուս հարցերի վերլուծության մասին մանրամասն տես **Գ. Հ. Ղարախանյան**, Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք, Երևան, ԵՊՀ հրատ., 2008թ.

հարաբերություններ, մասնավորապես՝ երեխաների նկատմամբ նրանց ունեցած իրավունքներն ու պարտականությունները:

Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են փոփոխել համատեղ սեփականության մասին քաղաքացիական օրենսգրքով սահմանված ռեժիմը, ամուսինների ողջ գույքի, նրա առանձին տեսակների կամ ամուսիններից ամեն մեկի գույքի նկատմամբ սահմանել համատեղ, բաժնային կամ անջատ սեփականության ռեժիմ:

Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են որոշել նաև մեկը մյուսի ապրուստը հոգալու, այսինքն այլմենտ վճարելու հետ կապված իրավունքներն ու պարտականությունները, մեկը մյուսի եկամուտների ստեղծմանը մասնակցելու եղանակները, նրանցից ամեն մեկի կողմից ընտանեկան ծախսերը հոգալու կարգը: Պայմանագրի կողմերը նույնիսկ կարող են որոշել այն գույքի տեսակները, որ պետք է հանձնվեն ամուսիններից ամեն մեկին ամուսնալուծության ժամանակ: Նրանք կարող են ամուսնական պայմանագրի մեջ մտցնել ամուսինների գույքային իրավունքներին վերաբերող ցանկացած դրույթ:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի նպատակներից է ընտանիքի անդամների փոխհարաբերությունները ժամանակի ոգուն համապատասխան կարգավորելը: Այստեղ արդեն կարևոր են ծնողների ու զավակների փոխհարաբերությունները: Իսկ դրա համար առաջին հերթին պետք է բացահայտվեն մայրությունն ու հայրությունը, առանց որոնց հնարավոր չէր լինի նորմալ ձևով կարգավորել մոր և զավակների, առավել ևս՝ հոր և զավակների փոխհարաբերությունները: Իսկ այդ հարցերն իրենց հիմնավոր պատասխաններն ստացել են ՀՀ ընտանեկան օրենսգրքում: Այս գործում արդեն էական դերակատարություն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինները:

Իրական կյանքում հիմնականում երեխաներ են ծնվում օրինական ամուսնության մեջ գտնվող ծնողներից և նրանք էլ ՔԿԱԳ մարմիններում գրանցվում են որպես երեխայի մայր կամ հայր: Սակայն եթե երեխայի ծնողներն ամուսնացած չեն լինում, երեխայի ծնունդը գրանցվում է երեխայի մոր և երեխայի հոր՝ ՔԿԱԳ մարմիններին հասցեագրված համատեղ դիմումի հիման վրա: Իսկ եթե բացակա-

յում է նման դիմումը, ապա երեխայի հայրությունը կարող է որոշվել դատական կարգով:

Բժշկականսաբանական գիտության զարգացման ներկա պայմաններում կարող է երեխա ծնվել ոչ միայն բնական եղանակով, այլև արհեստական սաղմնավորման կամ սաղմի պատվաստման մեթոդների կիրառումով: Այս եղանակով ծնված երեխաների ծնունդները ևս պետք է գրանցվեն, այսինքն՝ գրանցվեն երեխայի ինչպես մայրը, այնպես էլ հայրը: Ավելացնեք միայն, որ եթե ամուսնության մեջ գտնվող անձինք գրավոր ձևով իրենց համաձայնությունն են տվել կիրառելու արհեստական սաղմնավորման կամ սաղմի պատվաստման մեթոդը, ապա այդ մեթոդի կիրառման շնորհիվ երեխա ծնվելու դեպքում իրենք երեխայի ծնողներ են գրանցվում ծնունդների գրանցումների գրքում:

Ամուսնության մեջ գտնվող անձինք կարող են նաև գրավոր ձևով իրենց համաձայնությունը տալ սաղմի պատվաստում կատարելու ուրիշ կնոջ՝ երեխան նրա մեջ հասունացնելու նպատակով: Կինը, որն իր արգանդում հասունացրել է սաղմը, ապա ծննդաբերել, անվանվում է փոխնակ (սուրբոգատ) մայր: Այդ եղանակով ծնված երեխայի ծնունդը ՔԿԱԳ մարմնում գրանցելիս, իրենց համաձայնությունը տված ամուսիններին երեխայի ծնողներ գրանցելու համար պահանջվում է երեխա ծնած կնոջ, այսինքն՝ փոխնակ մոր, գրավոր համաձայնությունը:

Նոր ընտանեկան օրենսգիրքը առանձին գլուխ է նվիրել երեխաների իրավունքներին: Ընդ որում, երեխա համարվում է տասնութ տարեկան չդարձած անձը՝ անչափահասը: Այդ գլխում փաստորեն վերարտադրվում է ՀՀ 1996 թ. մայիսի 29-ի օրենքը «Երեխաների իրավունքների մասին»:

Օրենսդիրը ծնողներին օժտելով ծնողական բազմաթիվ իրավունքներով և ստեղծելով այդ իրավունքների իրականացման իրական երաշխիքներ, պաշտպանում է նրանց ծնողական իրավունքները, եթե դրանք ճիշտ են իրականացվում, այսինքն՝ իրականացվում են երեխայի շահերին համապատասխան: Սակայն եթե այդ իրավունքները չարաշահվում են, մասնավորապես՝ դրանք կամ չեն իրականացվում, կամ իրականացվում են ի վնաս երեխաների, ծնողները

կարող են գրկվել իրենց այդ երեխաների նկատմամբ ունեցած իրավունքներից:

Օրենքով նախատեսված են ոչ միայն ծնողական իրավունքներից գրկելու հնարավորությունը, այլև ծնողական իրավունքների սահմանափակումը:

Ճիշտ է, ծնողական իրավունքներից գրկելը և ծնողական իրավունքների սահմանափակումը կատարվում են դատական կարգով, սակայն ինչպես ծնողական իրավունքներից գրկելու, այնպես էլ այդ իրավունքները սահմանափակելու մասին պետք է համապատասխան գրառումներ արվեն ՔԿԱԳ մարմիններում:

Մեր հասարակարգում ընտանիքի անաշխատունակ ու կարիքավոր անդամների նկատմամբ հոգատարությունը ընտանիքի՝ բավարար միջոցներ ունեցող մյուս անդամների պարտականությունն է: Եթե այդ պարտականությունները չեն կատարվում կամ կատարվում են անբարեխիղճ ձևով, ապա ապրուստի միջոց՝ ալիմենտ պահանջելու իրավունք ունեցող անձի և ալիմենտ վճարելուն պարտավոր անձի միջև առաջանում է ալիմենտային պարտավորություն: Ալիմենտային պարտավորության վերաբերյալ նախկին օրենսդրության նորմերը հիմնականում վերարտադրվել են ՀՀ ընտանեկան օրենսգրքում: Մակայն նաև նրանում կատարվել են էական նորամուծություններ: Դրանցից գլխավորը, թերևս, այն է, որ ալիմենտ ստացող անձի (նրա ներկայացուցչի) և ալիմենտ վճարելուն պարտավոր անձի միջև կարող է կայացվել համաձայնություն ալիմենտի վճարման հարցի շուրջ: Համաձայնությունը պետք է կայացվի գրավոր ձևով և վավերացվի նոտարական կարգով: Ընտանեկան օրենսգրքը սահմանում է այդ համաձայնության կայացման հետ կապված մանրամասները: Մի բան պարզ է, որ ալիմենտային պարտավորությունների հետ կապված որևէ հարց ենթակա չէ գրանցման քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմիններում:

ՀՀ ընտանեկան նախկին օրենսդրությունը չէր կարգավորում այն հարցը, երբ ալիմենտ վճարելուն պարտավոր անձը մշտական բնակության համար մեկնում էր արտասահմանյան երկիր: Հաշվի առնելով, որ ներկայումս հաճախացել են ՀՀ քաղաքացիների ար-

տասահմանյան երկրներ մեկնելու դեպքերը և նման երևույթի իրավական գնահատման անհրաժեշտությունը, նոր օրենսգրքը սահմանում է, որ այն անձը, որը մշտական բնակության համար մեկնում է օտարերկրյա պետություն, կարող է ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն կնքել ընտանիքի այն անդամների հետ, որոնց նա օրենքով պարտավոր է ապրուստի միջոց տրամադրել ընտանեկան օրենսգրքի նորմերին համապատասխան: Համաձայնություն չկնքվելու դեպքում շահագրգիռ անձը կարող է դիմել դատարան ալիմենտի չափը կայուն դրամական գումարով որոշելու և ալիմենտը միանվագ վճարելու կամ ալիմենտի հաշվին որոշակի գույք տրամադրելու կամ այլ եղանակով ալիմենտ վճարելու մասին:

Ելնելով ծնողներ չունեցող կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դաստիարակությունն այլ ընտանիքներում կազմակերպելու պետական քաղաքականությունն իրականացնելու անհրաժեշտությունից, ՀՀ ընտանեկան օրենսգրքը մի ամբողջական բաժին է հատկացրել այդ իրավական հարցերին: Հիշեցնենք, որ նոր օրենսդրությունը իր մեջ ներառում է ոչ միայն կյանքի քննությունը բռնած որդեգրումը և խնամակալությունն ու հոգաբարձությունը, այլև ավելացնում է խնամատար ընտանիքը, որը նախկինում պրակտիկային հայտնի էր պատրոնատ անունով:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետք է հաշվառվեն ոչ միայն խնամակալության ու հոգաբարձության մարմիններում (գործնականում՝ տեղական ինքնակառավարման մարմիններում), այլև հանրապետական մասշտաբով՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունում: Նպատակն այն է, որ նման երեխաները հաշվառվեն հանրապետական մասշտաբով, երկիրն ունենա ծնողագուրկ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների վերաբերյալ տվյալների բանկ: Պետք է հաշվառվեն նաև նրանք, ովքեր ցանկություն ունեն երեխա որդեգրելու կամ երեխա ընդունելու խնամատար ընտանիք:

Մինչև այժմ որդեգրման որոշում կայացնելու իրավունքը վերապահված էր տեղական ինքնակառավարման մարմիններին: Նոր օրենսգրքով այդ պարտականությունը դրված է դատարանների վրա: Դատարանների կողմից երեխաների որդեգրման վերաբերյալ գոր-

ծերի վարույթի մանրամասները շարադրված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29 պրիմ մեկ գլխի 173 1-5 պրիմ հոդվածներով, որոնք քաղաքացիական դատավարության օրենսգրքում ավելացվել են ՀՀ 2005 թ. հուլիսի 7-ի օրենքով: Ընտանեկան օրենսգրքով էլ սահմանված են ոչ միայն որդեգրման պայմանները, այլև որդեգրման գաղտնիությունն ապահովող պայմանները: Օրինակ, սահմանված է, որ ամուսնության մեջ չգտնվող որդեգրողի և որդեգրվող երեխայի տարիքային տարբերությունը պետք է լինի տասնութ տարուց ոչ պակաս, ծնողները կարող են հետ վերցնել երեխային որդեգրելու համար իրենց տված համաձայնությունը մինչև նրան որդեգրելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Նաև դատարանին իրավունք է տրվում որդեգրման գաղտնիքն ապահովելու համար որդեգրողի խնդրանքով փոփոխել որդեգրվող երեխայի ծննդյան ժամանակը, բայց ոչ ավելի, քան երեք ամիս, ինչպես նաև նրա ծննդյան վայրը: Որդեգրման վերաբերյալ դատարանի կայացրած վճռի կրկնօրինակն ուղարկվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմին, համապատասխան գրառումներ կատարելու համար:

ՀՀ նոր ընտանեկան օրենսգրքը վերարտադրել է երեխաների նկատմամբ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու, խնամակալների ու հոգաբարձուների իրավունքների ու պարտականությունների շրջանակի, խնամակալությունն ու հոգաբարձությունը դադարելու վերաբերյալ նախկին օրենսդրության նորմերը: Սակայն երեխաների նկատմամբ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու կարգը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

Որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ընտանեկան դաստիարակությունը կազմակերպելու ձև նոր ընտանեկան օրենսգրքը նախատեսում է նաև խնամատար ընտանիքը: Նման ընտանիք առաջանում է այն դեպքում, երբ ծնողներ չունեցող կամ ծնողական խնամքից ու դաստիարակությունից զուրկ երեխան պայմանագրով հանձնվում է այլ ընտանիք: Պամանագիրը կնքվում է խնամակալության ու հոգաբարձության մարմնի և ամուսինների կամ ամուսնության մեջ չգտնվող չափահաս ու գործունակ անձի միջև: Խնամատար ընտանիքը երեխային պահելու պարտականու-

յունը կատարելու համար ստանում է դրամական օգնություն, որի չափը և վճարման կարգը որոշում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքում առանձին բաժին է նվիրված օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցությամբ ընտանեկան հարաբերությունների նկատմամբ ՀՀ օրենսդրությունը կիրառելուն:

§ 3.Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինները և նրանց աշխատանքի կազմակերպումը

Խորհրդային իշխանության տարիներին քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ կատարում էին ինչպես իշխանության տեղական մարմինները՝ գյուղական և ավանային սովետների գործադիր կոմիտեները, այնպես էլ շրջանային ու քաղաքային սովետների գործադիր կոմիտեներին կից գործող հատուկ մարմիններ, որոնք անվանվում էին Չագսի բաժիններ: Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բառակապակցության ռուսերեն կրճատ անվանումը Չագս-ն էր, և այդ բառն էլ մտավ նաև հայերեն ինչպես օրենսդրական, այնպես էլ ենթաօրենսդրական ակտերի մեջ: Իրականում քաղաքներում ու շրջանային կենտրոններում քաղաքացիական կացության ակտերը գրանցվում էին քաղաքային, շրջանային, քաղաքի շրջանային սովետների գործադիր կոմիտեների Չագսի բաժիններում: Բացի դրանից, ամուսնությունների ու ծնունդների գրանցումը տեղի էր ունենում քաղաքային սովետների գործադիր կոմիտեների ամուսնության պալատում: Օրինակ Երևան քաղաքում մինչև վերջերս ծնունդների ու ամուսնությունների հանդիսավոր գրանցումներ էին կատարվում Երիտասարդական պալատում, իսկ այլ բնակավայրերում՝ մշակույթի պալատներում: Գյուղական վայրերում ու ավաններում քաղաքացիական կացության ակտերը գրանցվում էին գյուղական ու ավանային սովետների գործադիր կոմիտեներում: Ընդ որում Չագսի բաժիններն ունեին ավելի լայն իրավասություններ, քան գյուղական ու ավանային սովետների գործադիր կոմիտեները: Այդ կարգը, անշուշտ, շատ հարմար էր Հա-

յաստանի նման Հանրապետության համար, քանի որ երկրի բազմաթիվ բնակավայրեր հեռու էին շրջանային կենտրոններից, բավարար չէր տրանսպորտային կապը շրջանային կենտրոնների հետ: Այս հանգամանքը որոշ առումով թեթևացնում ու հեշտացնում էր գյուղական վայրերում ապրող մարդկանց գործը, երբ նրանք պետք է ՔԿԱԳ մարմիններում կատարել տային այս կամ այն կացության գրանցումը: Նրանք այլևս նման գրանցումների համար չէին մեկնում շրջանային կենտրոններ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներն իրականացվում են այդ նպատակով հատուկ ստեղծված մարմիններ՝ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինները, կրճատ՝ «ՔԿԱԳ մարմիններ»: Հանրապետության ՔԿԱԳ մարմինների գործունեությունը կազմակերպում է այն համայնքի ղեկավարը, որտեղ գտնվում են համապատասխան կառույցները: Ներկայումս Հայաստանում գործում են ՔԿԱԳ այնքան մարմիններ, համարյա որքան եղել են Հայաստանում նախքան խորհրդային կարգերի վերացումը: Չնայած երկիրը բաժանված է մարզերի, սակայն մարզային մասշտաբով ՔԿԱԳ մարմինների համապատասխան ստորաբաժանում չկա: Դրա համար էլ Օրենքը սահմանում է, որ ՔԿԱԳ մարմինների գործունեության մեթոդական ղեկավարումն, ինչպես նաև վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը: Իսկ այդ նպատակով արդարադատության նախարարության համակարգում գործում է հատուկ ծառայություն՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Գործակալություն:

ՔԿԱԳ մարմինները կոչված են ապահովելու Օրենքի և քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման հետ կապված իրավական այլ ակտերի պահանջների կատարումը:

ՀՀ արդարադատության նախարարության կանոնադրության համաձայն ՔԿԱԳ ծառայության վրա դրված են հետևյալ պարտականությունները, որոնք արտացոլվել են նաև Օրենքի 80-րդ հոդվածում: Այդ նորմատիվ ակտերի համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը.

- իրականացնում է ՔԿԱԳ մարմինների մեթոդական ղեկավարումը և վերահսկողությունը,

- հաստատում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված՝ Օրենքից բխող հրահանգչական ցուցումներ,

- կարող է առաջարկություններ ներկայացնել տեղական ինքնակառավարման և իրավասու այլ մարմինների՝ ՔԿԱԳ մարմնի ղեկավարներին և աշխատողներին խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ,

- ուսումնասիրում է ՔԿԱԳ մարմինների գործունեության դեմ ուղղված բողոքները,

- կատարում է ՔԿԱԳ մարմիններում գրանցման գործառնությունների օրինակա նության պահպանման վերաբերյալ ստուգումներ,

- իրականացնում է Օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

ՔԿԱԳ մարմինների մասին Օրենքը սահմանում է ՔԿԱԳ մարմնի ղեկավարի և այդ մարմնի աշխատողների լիազորությունները: Այսպես, Օրենքի 81 հոդվածի համաձայն ՔԿԱԳ մարմնի ղեկավարը՝

- կազմակերպում և վերահսկում է ՔԿԱԳ մարմնի աշխատանքները,

- կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված իրավական ակտերի կատարումը,

- կատարում է ՀՀ արդարադատության նախարարության ցուցումները,

- ՔԿԱԳ մարմնի աշխատողների միջև բաշխում է նրանց պարտականությունները,

- կատարում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները,

- իր իրավասության սահմաններում համագործակցում է պաշտոնատար այլ անձանց հետ,

- ուսումնասիրում է ՔԿԱԳ մարմնի աշխատողների գործունեության դեմ ուղղված բողոքները,

ԳԼՈՒԽ 2.
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՅՈՒՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնելիս ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և այլ նյութեր,

- ուսումնասիրում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համար տրված դիմումները, կայացնում է համապատասխան որոշումներ, պարզաբանում դրանց բողոքարկման ժամկետները և կարգը,

- պատասխանատվություն է կրում ՔԿԱԳ մարմնի առջև դրված խնդիրների լուծման համար,

- իրականացնում է Օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված լիազորություններ:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատողների լիազորությունները սահմանված են Օրենքի 82 հոդվածով, համաձայն որի ՔԿԱԳ մարմնի աշխատողը`

- իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների ժամանակին, լրիվ և ճիշտ կատարումն ապահովելու անհրաժեշտ աշխատանքներ,

- կատարում է ՔԿԱԳ մարմնի ղեկավարի ցուցումները և հանձնարարականները,

- պատասխանատվություն է կրում իր առջև դրված խնդիրների լուծման համար,

- իրականացնում է Օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված լիազորություններ:

Արտասահմանում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների քաղաքացիական կացության ակտերի գրանցումը կատարում է համապատասխան երկրում գործող Հայաստանի Հանրապետության հյուպատոսը:

Պետական այլ մարմիններ կամ պաշտոնատար անձինք իրավունք չունեն գրանցել քաղաքացիական կացության ակտերը:

Վերջում ավելացնենք, որ ՔԿԱԳ մարմինների ղեկավարների և աշխատողների գործողությունները կարող են բողոքարկվել վերադատության և (կամ) դատական կարգով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ պետական իրավասու մարմիններում գրանցման ենթակա կացությունները վերաբերվում են քաղաքացու կյանքի այս կամ այն վիճակներին: Դրանց գրանցումն ըստ էության իրականացվում է սահմանված ընդհանուր կանոնների համաձայն: Սակայն քանի որ դրանցից յուրաքանչյուրն ունի առանձնահատուկ նշանակություն, անհավասար իրավական հետևանքներով, ուստի ՀՀ օրենսդրությամբ սահմանված են քաղաքացիների կյանքի այդ կացությունների գրանցման առանձնահատկությունները, կապված շահագրգռված անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերի շրջանակից, մինչև այդ կացությունների գրանցման ժամկետները, դրանց առաջացման հետևանքները և այլն: Հաշվի առնելով այդ բոլորը, օրենսդիրը, կարելի է ասել, առանձին մանրամասնությամբ կարգավորել է այդ կացությունները քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցելու կարգը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցում կարող է կատարվել քաղաքացիների դիմումի հիման վրա:

ՔԿԱԳ մարմիններին դիմել կարելի է գրավոր: Դիմողը նախ պետք է ներկայացնի իր ինքնությունը վկայող փաստաթուղթ՝ անձնագիր, զինվորական գրքույկ, գրանցման ենթակա փաստը հավաստող փաստաթղթեր՝ երեխայի ծննդի վերաբերյալ բժշկական հաստատության կամ բժշկի տված փաստաթուղթը, քաղաքացու մահվան փաստը հավաստող փաստաթուղթը, որդեգրման վերաբերյալ դատարանի կայացրած վճիռը և այլ փաստաթղթեր:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար գանձվում է պետական տուրք, որը սահմանված է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թ. դեկտեմբերի 27-ի օրենքով:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ժամանակ իրավասու մարմինները պետք է ճշտությամբ պահպանեն օրենսդ-

րության պահանջները՝ ՔԿԱԳ ընդհանուր կանոնները, ինչպես նաև յուրաքանչյուր ակտի գրանցման համար սահմանված առանձնահատուկ կանոնները: Մի խոսքով՝ նրանք պարտավոր են մասնակցել ողջ երկրում օրինականությունը ապահովելու գործին: Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական կացության ակտերի մասին Օրենքն ամենայն մանրամասնությամբ սահմանել է քաղաքացիական կացության ակտերի յուրաքանչյուր տեսակի գրանցման կարգն ու պայմանները, նաև գրանցման ժամկետը: Իսկ դրանցից ցանկացած շեղում կարող է հասցնել անցանկալի հետևանքների: Դրա հետևանքով կարող են սահմանափակվել քաղաքացիների իրավունքներն ու շահերը, վնաս պատճառվել պետության ու հասարակության շահերին:

ՔԿԱԳ մարմիններին դիմած քաղաքացիները նույնպես պետք է պահպանեն այն բոլոր կանոնները, որոնք սահմանված են քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար: Համաձայն ենք Վերա Ալեքսանդրովնա Գրաչովայի այն եզրակացության հետ, որ «Սահմանված կանոնների ճշգրիտ պահպանումը քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի, ինչպես նաև պետության ու հասարակության շահերի ապահովման կարևորագույն պայմանն է»¹³: Դրա համար էլ ՀՀ օրենսդրությամբ հաստատված են ինչպես քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրքերի (մատյանների), այնպես էլ գրանցված յուրաքանչյուր կացության մասին տրվող վկայականների ձևերը: Տրվող վկայականներն էլ պետք է լրացվեն ներկայացվող պահանջներին համապատասխան՝ գրագետ, գեղեցիկ ձեռագրով, անսխալ, որպեսզի ակտերի գրանցումներն ու վկայականներն ունենան իրավաբանական նշանակություն: Ինչպես ակտերի գրանցման մեջ, այնպես էլ վկայականներում որևէ անհրաժեշտ տեղեկության, կնիքի, ստորագրության բացակայությունը կարող է էականորեն վնասել քաղաքացիներին:

ՔԿԱԳ մարմիններում գրանցում կատարելիս չկան և չեն կարող լինել մանրուքներ: Այստեղ կարևոր է ամեն ինչ: Եվ այդ նպատակով ՔԿԱԳ մարմնին դիմողը պետք է ընթերցի և ստորագրի յու-

¹³ Վ.Ա. Գրաչովա, Քաղաքացի դիմում է Ջագս, «Հայաստան» հրատ., Ե. 1984, էջ 13:

րաքանչյուր ակտի գրառումը, համապատասխան գրանցումից հետո իրեն տրվող գրանցման վկայականը: Անհրաժեշտության դեպքում նրա համար պետք է թարգմանվի գրանցման տեքստը:

§ 1. Ծննդի պետական գրանցումը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական իրավասու մարմիններում պարտադիր գրանցման ենթակա է երեխայի ծնունդը: Ծննդի գրանցման պահն իրավաբանական հիմք է հանդիսանում արձանագրել, որ արդեն առկա է իրավունակությամբ օժտված քաղաքացի: Միաժամանակ երեխայի ծննդի կապակցությամբ առանձին անձինք ձեռք են բերու որոշակի իրավունքներ ու պարտականություններ: Այդ անձանց իրավունքներն ու պարտականությունները սկսվում են երեխայի ծննդի փաստով: Այսպես, ծնողների ու երեխաների փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները հիմնվում են երեխաների ծննդի փաստի վրա, որի համար իրավաբանական հիմք է համարվում երեխայի ծննդյան վկայականը: Ծննդի ակտի գրանցումով հաստատվում է ինչպես երեխայի ծնվելը որոշակի անձանցից՝ նրա ծնողներից, այլև ազգակցական այլ կապերը, ասենք՝ երեխայի ու իր եղբայրների ու քույրերի միջև, երեխայի ու նրա պապերի ու տատերի միջև:

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմիններում քաղաքացիների ծնունդը գրանցվում է օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: ՔԿԱԳ մարմիններում ծննդի պետական գրանցման համար պահանջվող հիմքերը նշված են ՔԿԱԳ մասին Օրենքի 14 հոդվածում: Այդ հիմքերն են

ա) ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որտեղ տեղի է ունեցել ծնունդը,

բ) ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որը ցուցաբերել է բժշկական օգնություն ծննդի ժամանակ,

գ) ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական գործունեությամբ զբաղվող անձի՝ բժշկի կողմից բժշկական կազմակերպությունից դուրս ծննդի դեպքում,

դ) ծննդի մասին սահմանված ձևի գրավոր հայտարարությունը՝ տրված ծննդի ժամանակ ներկա գտնված անձի (անձանց) կողմից և երեխայի առողջության մասին բժշկական կազմակերպության տված տեղեկանքը բժշկական կազմակերպությունից դուրս և առանց բժշկական օգնություն ցուցաբերելու ծննդի դեպքում:

Օրենքով սահմանված չէ, թե հատկապես ով կարող է երեխայի ծնունդը գրանցելու հայտարարություն տալ: Իրականում երեխայի ծնունդը գրանցելու հայտարարություն տալիս են նրա ծնողները՝ երեխայի հայրը կամ մայրը: Սակայն ՔԿԱԳ մասին օրենքը սահմանում է, որ եթե տվյալ անձը հայտարարություն տալու համար անձամբ չի կարող ներկայանալ ՔԿԱԳ մարմին, այդ կարող է անել նրանց ընտանիքի անդամը, պապը, տատը, երեխայի ծնողների եղբայրը, քույրը: Իսկ եթե երեխայի ծնունդը գրանցելու համար դիմում է երեխայի ծնողների կողմից լիազորված անձը, ապա նրա ներկայացրած հայտարարության տակ դրված նրա ստորագրությունը պետք է վավերացվի նոտարական կարգով: Ծնողների հիվանդության, մահվան կամ նրանց համար որևէ անհնարինության պատճառով դիմում չներկայացնելու դեպքում երեխայի ծնունդը գրանցելու համար կարող է դիմում ներկայացնել նրանց ընտանիքի որևէ չափահաս անդամ: Փաստորեն օրենքը չի սահմանում այն անձանց շրջանակը, ովքեր իրավունք ունեն դիմում ներկայացնել ՔԿԱԳ մարմիններին երեխայի ծնունդը գրանցելու համար: Միայն թե դիմողը պետք է ներկայացնի անհրաժեշտ փաստաթղթեր:

Եթե հնարավոր չէ ապահովել երեխայի ծննդի փաստի առթիվ վերը նշված հիմքերից թեկուզ մեկը, ապա երեխայի ծննդի պետական գրանցումը կարող է կատարվել երեխայի ծննդաբերության փաստը հաստատող դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

Երեխայի ծնունդը պետք է գրանցվի նրա ծննդի կամ ծնողի (ծնողների) բնակության վայրի ՔԿԱԳ մարմնում: Ընկեցիկ, այ-

սինքն՝ գտնված երեխաների ծնունդը գրանցվում է նրանց գտնելու վայրի ՔԿԱԳ մարմնում:

Եթե երեխան ծնվել է տրանսպորտի միջոցում ուղերթի ընթացքում (գնացքում, նավում, օդանավում), ապա ծննդի պետական գրանցումն իրականացնում է ծնողների (ծնողներից մեկի) բնակության վայրի կամ տրանսպորտային միջոցի ուղերթի տարածքում գտնվող ՔԿԱԳ որևէ մարմինը):

Եթե երեխան ծնվել է, երբ մայրը եղել է արշավախմբում կամ բնակավայրից հեռու վայրում, որտեղ չկա ՔԿԱԳ բաժին, երեխայի ծնունդը գրանցվում է ծնողների մշտական բնակավայրում, երբ նրանք կվերադառնան իրենց բնակավայրը:

ՔԿԱԳ մասին օրենքի 16 հոդվածի համաձայն երեխայի ծննդյան մասին հայտարարությունը պետք է արվի **գրավոր**: Ծննդյան մասին դիմումում (հայտարարության մեջ) պետք է նշել հետևյալ տեղեկությունները.

- ա) երեխայի անունը, ազգանունը, հայրանունը,
- բ) երեխայի ծննդյան վայրը, ժամանակը, սեռը,
- գ) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Բոլոր դեպքերում երեխայի ծննդյան մասին հայտարարությունը պետք է ՔԿԱԳ մարմնին տրվի ոչ ուշ, քան երեխայի ծննդի օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում: Ըստ որում հայտարարությանը պետք է կցվեն անհրաժեշտ փաստաթղթեր, մասնավորապես դիմողի անձը հաստատող, երեխայի ծնունդը հաստատող, երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկություններ լրացնելու համար հիմք համարվող փաստաթղթեր:

Երեխայի ծնունդը ժամանակին չգրանցելը կարող է առաջացնել ոչ միայն թյուրիմացություններ, այլև դժվարություններ հետագայում այն շտկելու գործում: Մասնավորապես դժվարություններ կառաջանան ծննի գրանցման համար կրկնակի ծննդյան վկայական ստանալիս:

Եթե քաղաքացիներն օգտվել են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից՝ արհեստական սերմնավորում կամ արհեստական բեղմնավորում և սաղմի ներպատվաստում կամ պտղի հասունացում այլ կնոջ (փոխնակ մոր) միջոցով և ունեն նո-

տարական կարգով վավերացված փոխադարձ պայմանագիր, ապա երեխայի ծնունդը հաստատող փաստաթղթի հետ պետք է ներկայացվի պայմանագրի պատճենը, որը հաստատում է երեխային ծննդաբերած կնոջ համաձայնությունը՝ նշված ամուսիններին որպես երեխայի ծնողներ գրառելու վերաբերյալ:

Երեխայի ծննդի ակտի գրառման մեջ երեխայի **անունը** գրառվում է ծնողների համաձայնությամբ: Անուն ընտրելու իրավունքը ծնողներինն է: Մակայն չի բացառվում, որ ծնողներն այդ հարցում համաձայնության չգան: Նման դեպքում երեխայի անվան հարցը որոշում է խնամակալության և հոգաբարձության մարմինը: Ընդ որում խնամակալության և հոգաբարձության մարմինը, լսելով երկու ծնողների փաստարկները, որոշում է երեխայի անունը, ընտրելով ծնողների առաջարկած անուններից մեկը:

Մեր իրականության մեջ երբեմն երեխայի ծնողներից մեկը, մասնավորապես տղամարդը, ցանկանում է, որ երեխային տրվի իր առաջարկած անունը, որի հետ մյուս ծնողը համաձայն չի լինում: Օրինակ, իրենց երեխայի ծնունդը գրանցելու համար Երևան քաղաքի Նոր Նորքի թաղապետարանի ՔԿԱԳ բաժին էին դիմել ամուսինները: Երեխայի հայրը խնդրում էր երեխային տալ իր հոր անունը՝ Ֆրիդոն, որի հետ համաձայն չէր երեխայի մայրը: Մայրը խիստ հուզված էր, աչքերում արտասուքներ երևացին: Իսկ ավանդապաշտ ընտանիքի հարսը այդ հարցով չէր կարող դիմել թաղապետարանի խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողովին: Չանցան ՔԿԱԳ բաժնի աշխատակցի հորդորները: Նա ստիպված գրանցեց երեխայի Ֆրիդոն անունը:

Եթե երեխայի ծնունդը գրանցում են ոչ թե ծնողները, այլ ուրիշներ (պապ, տատ, քույրեր, եղբայրներ, այլ հարազատներ), երեխայի անունը որոշվում է այդ անձանց ընտրությամբ)¹⁴ :

Երեխայի ծննդի ակտի գրառման մեջ երեխայի **հայրանունը** գրառվում է ծնողների ամուսնության վկայականին համապատասխան: Իսկ եթե երեխայի ծնողներն ամուսնացած չեն, ապա երեխայի հայրը որոշվում է հոր և մոր հայտարարության հիման վրա: Իսկ

ահա երեխայի հոր հետ ամուսնության մեջ չգտնվող մոր ցանկությանը երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկությունները լրացվում են մոր ցուցումով:

Երեխայի **ազգանունը** գրառվում է նրա ծնողների ազգանվամբ, եթե նրանք կրում են ընդհանուր ազգանուն: Ծնողների տարբեր ազգանունների առկայության դեպքում երեխայի ազգանունը գրառվում է հոր կամ մոր ազգանվամբ՝ ծնողների համաձայնությամբ:

ՌԻԻԵՄՆ երեխայի ծնունդը գրանցելիս փաստորեն պետք է գրանցումներ կատարվեն նաև նրա ծնողների մասին: Մասնավորապես պետք է գրվի հոր և մոր անունը, ազգանունը, հայրանունը, ազգությունը, քաղաքացիությունը: Ըստ որում եթե երեխայի ծնողներն ամուսնացած են, նրանց մասին տվյալները գրվում են ամուսնության վկայականի հիման վրա: Եթե նրանք ամուսնացած չեն, ապա երեխայի հոր և մոր մասին գրանցումը կատարվում է նրա հոր և մոր՝ ՔԿԱԳ մարմնին հասցեագրված համատեղ հայտարարության հիման վրա առ այն, որ նրանք համարվում են երեխայի հայրը և մայրը: Իսկ եթե բացակայում է երեխայի ծնողների՝ ՔԿԱԳ բաժնին հասցեագրված համատեղ դիմումը, ապա երեխայի ծնունդը գրանցվում է մոր հայտարարության հիման վրա: Ըստ որում, հոր մասին տվյալները գրվում են մոր հայտարարությամբ հետևյալ կերպ. հոր ազգանունը գրվում է մոր ազգանունով, հոր անունը գրվում է այն անունով, ինչ հայրանուն տրվել է երեխային: Իսկ հոր հայրանունը գրվում է մոր հայտարարությամբ: Եթե այդ եղանակով գրանցումներ կատարելու արդյունքում երեխայի հոր մասին տվյալները՝ անունը, հայրանունը, ազգանունը համընկնի իրական անձնավորության համապատասխան տվյալների հետ, դա ոչ մի իրավական հետևանք չի ունենա:

Ամուսնության մեջ գտնվող անձինք, որոնք գրավոր համաձայնություն են տվել որևէ կնոջից արհեստական սաղմնավորման կամ սաղմի պատվաստման միջոցների կիրառմամբ երեխա ունենալու մասին, ծննդի պետական գրանցման գրքում գրառվում են որպես այդ մեթոդների կիրառմամբ ծնված երեխայի ծնողներ (ՔԿԱԳ մասին օրենքի 17 հոդվածի 4 կետ):

¹⁴ Այս մասին ավելի մանրամասն տես **Գ. Ղարախանյան, Քաղաքացուն պետք է անուն, Եր. «Հայաստան» հրատ. 1991 թ.:**

Քաղաքացիական կացության ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված են նաև երեխայի ծնունդը գրանցելու առանձնահատուկ դեպքերը: Այսպես, **ընկեցիկ** երեխային գտնողը պարտավոր է այդ մասին հայտարարություն տալ երեխայի գտնվելու վայրի ոստիկանությանը կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնին: Այդ մարմիններն էլ պետք է առաջին հերթին նրանց տեղավորեն համապատասխան հաստատություններում՝ դաստիարակչական ու բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում: Վերջիններս պետք է բժշկական կազմակերպության միջոցով որոշեն երեխայի տարիքը, նշեն նրա սեռը: Միաժամանակ պարտավոր են երեխային գտնելուց հետո յոթ օրվա ընթացքում հայտարարել գտնված (ընկեցիկ) երեխայի ծննդի պետական գրանցման մասին, դրան կցելով երեխային հայտնաբերելու մասին ոստիկանության կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի կողմից տրված փաստաթուղթը, երեխայի տարիքն ու սեռը հաստատող փաստաթուղթ, որ տվել է բժշկական կազմակերպությունը:

Գտնված երեխայի անունը, ազգանունը, հայրանունը գրանվում է ոստիկանության կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի հայտարարությանը համապատասխան: Սակայն երեխայի ծննդի ակտի գրառման մեջ նրա ծնողների մասին տեղեկություններ չեն լրացվում (ՔԿԱԳ մասին օրենքի 19 հոդվ. կետ 4):

Գործող օրենսդրությամբ գրանցման ենթակա է նաև մահացած ծնված կամ կյանքի չորս շաբաթվա ընթացքում մահացած երեխայի ծնունդը: Այսպես, մահացած ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացվում է բժշկական կազմակերպության կամ բժշկի կողմից տրված՝ պերինատալ մահվան մասին սահմանված ձևի փաստաթղթի հիման վրա: Սակայն մահացած ծնված երեխայի մահվան պետական գրանցում չի կատարվում, ուրեմն և երեխայի համար ծննդյան վկայական չի տրվում: Բայց երեխայի ծնողի (ծնողների) պահանջով տրվում է փաստաթուղթ, որով հաստատվում է մահացած ծնված երեխայի ծննդի պետական գրանցման փաստը:

Եթե երեխան մահացել է կյանքի չորս շաբաթվա ընթացքում, ապա գրանցվում է ինչպես երեխայի ծնունդը, այնպես էլ նրա մահը: Ծննդի և մահվան ակտերի գրառումների հիման վրա տրվում է միայն երեխայի մահվան վկայական:

Մահացած ծնված երեխայի ծննդի, ինչպես նաև կյանքի չորս շաբաթվա ընթացքում երեխայի մահվան մասին հայտարարությունը ևս պետք է տրվի ոչ ուշ, քան մահացած ծնված երեխայի ծննդից կամ երեխայի մահվան օրվանից հետո յոթ օրվա ընթացքում:

Իրական կյանքում քիչ չեն այն դեպքերը, երբ երեխայի ծնունդը ժամանակին չի գրանցվում տարբեր պատճառներով: Սակայն այդ փաստը հետագայում բացահայտվում է: Ասենք՝ երեխային նախադպրոցական հիմնարկ, թեկուզ դպրոց ընդունելու ժամանակ, անգամ զինվորական հաշվառման առիթով է բացահայտվում այդ փաստը: Սովորաբար դա տեղի է ունենում գյուղական վայրերում: Այդ հանգամանքը արժանացել է օրենսդիրի ուշադրությանը և պարզաբանում է ստացել ՔԿԱԳ մասին օրենքի 21 հոդվածով: Այդ հոդվածի համաձայն «մեկ տարեկան և ավելի դարձած երեխայի ծննդի պետական գրանցումը բժշկական կազմակերպության կամ բժշկի կողմից ծննդյան մասին տրված սահմանված ձևի փաստաթղթի առկայության դեպքում իրականացվում է ծնողների (ծնողներից մեկի) կամ շահագրգիռ այլ անձանց գրավոր դիմումի հիման վրա»: Ասված է պարզ ու հասկանալի ձևով: Սակայն այդ նույն օրենքը պատասխան չի տալիս այն դեպքին վերաբերող հարցին, երբ երեխայի ծնունդը չի գրանցվել մինչև նրա մեկ տարեկան դառնալը: Հիշեցնենք, որ ՔԿԱԳ մասին օրենքի սկզբնական տեքստում եղել է այդ հարցին առնչվող պարբերություն, որը վերացվել է ՀՀ 2006 թվականի մայիսի 23-ի օրենքով: Եվ ահա ՀՀ արդարադատության նախարարի 2007 թ. մայիսի 14-ի թիվ 97-ն հրամանով հաստատված Հրահանգչական ցուցումների 3-րդ կետի համաձայն մինչև 18 տարեկան երեխաների ծննդի պետական գրանցումը բժշկական կազմակերպության կամ կամ բժշկի կողմից ծննդյան մասին տրված սահմանված ձևի փաստաթղթի առկայության դեպքում իրականացվում է ծնողների (ծնողներից մեկի) կամ շահագրգիռ այլ անձանց գրավոր դիմումի հիման վրա:

Առանձնահատուկ դեպք է համարվում նաև իրական կյանքից վերցված հետևյալ օրինակը: Ամուսնության մեջ գտնվող կինը երեխա է ունենում: Եվ երբ նա դիմում է ՔԿԱԳ բաժին երեխայի ծնունդը գրանցելու համար, նրանից պահանջվում է ներկայացնել իր ամուսնության վկայականը: Սակայն նա էլ խնդրում է երեխայի հոր մասին գրանցումը չանել ամուսնության վկայականի հիման վրա, քանի որ ավելի քան հինգ տարի է, որ ամուսինն իրեն թողել հեռացել է և այժմ նույնիսկ նրա գտնվելու տեղը չգիտի: Կինը խնդրել է երեխայի հորը վերաբերող տվյալները գրել իր հայտարարության հիման վրա: Նրա խնդրանքը բավարարվել է:

Օրենքի ուղղակի նշումով երեխայի չափահաս դառնալուց հետո նրա ծննդի պետական գրանցումն իրականացվում է երեխայի դիմումի հիման վրա (հոդված 21):

Ծնունդների գրանցման մատյանում ծննդի ակտի գրառման մեջ բավականին ընդարձակ գրառումներ են կատարվում (տես ՔԿԱԳ մասին օրենքի 22 հոդվածը):

Միաժամանակ երկու կամ ավելի երեխաների ծննդյան դեպքում երեխայի ծննդի պետական գրանցում կատարվում է յուրաքանչյուր երեխայի համար առանձին, նշելով նրանց ծննդյան հաջորդականությունը:

Երեխայի ծնունդը գրանցելուց հետո լրացվում է **ծննդյան վկայական**, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

ա) երեխայի անունը, հայրանունը, ազգանունը, ծնողների փոխադարձ համաձայնությամբ՝ նաև ազգությունը, ծննդյան վայրը և ժամանակը,

բ) ծնողների անունը, հայրանունը, ազգանունը և ազգությունը,

գ) ծննդի ակտի գրառման ժամանակը և համարը,

դ) ծննդի պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ մարմնի անվանումը),

ե) ծննդյան վկայական տալու ժամանակը:

§ 2. Ամուսնության պետական գրանցումը

Ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև կայացված այն համաձայնությունն է, որով նրանք պայմանավորվում են ապրել համատեղ, վարել ընդհանուր տնտեսություն, ունենալ երեխաներ և համատեղ կազմակերպել նրանց դաստիարակությունն ու խնամքը: Ասածից ուղղակիորեն բխում է, որ ամուսնությունը անձնական բնույթ ունեցող երևույթ է: Սակայն նրա էությունից ուղղակիորեն հետևում է, որ այն նաև հասարակական երևույթ է, որի կայունությամբ ու հարատևությամբ շահագրգռված է ոչ միայն ողջ հասարակությունը, այլև պետությունը: Այդ հիմնավորմամբ էլ ընտանեկան օրենսդրությամբ սահմանվել են ինչպես այն պարտադիր պայմանները, որոնց առկայության դեպքում կարելի է գրանցել ամուսնանալ ցանկացող անձանց ամուսնությունը, այնպես էլ այն հանգամանքները, որոնք դիտվում են որպես ամուսնությունը գրանցելու արգելք:

Ամուսնանալու, այսինքն՝ իր ընտանիքն ստեղծելու իրավունքը տղամարդու և կնոջ կենսական նշանակության իրավունք է: Այդ իրավունքն ամրագրված է ոչ միայն ներպետական օրենքներով, այլև մարդու իրավունքների բնագավառի միջազգային իրավական ակտերով: Այո, բոլոր քաղաքացիներն էլ իրավունք ունեն, ինչ որ չափով նաև պարտավոր են ամուսնանալ: Հայտնի ֆրանսիացի գրող Օնորե Դը Բալզակն ասում էր, թե «ամուրի մնալու վիճակը հակահասարակական է»:

Տղամարդու և կնոջ միջև ամուսնական իրավունքներ ու պարտականություններ առաջանում են ամուսնությունը ՔԿԱԳ մարմիններում գրանցվելու պահից: Իսկ ամուսնությունը կայացված է համարվում օրենքով սահմանված պայմանների պահպանման դեպքում: Նման պայմանները նշված են ՀՀ Ընտօր. 10 –րդ հոդվածում: Այդ պայմաններն են.

ա) ամուսնացող անձանց՝ տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը,

բ) նրանց ամուսնական տարիքի հասած լինելը:

Վերը շարադրվածից երևում է, որ Հայաստանի Հանրապետությունում ամուսնություն կարող է տեղի ունենալ միայն տղամա-

րու և կնոջ միջև: Միասեռ անձանց միջև ամուսնություն մեր երկրում չի թույլատրվում: Եվ դա բացատրվում է մարդկային բնության օրենքներով:

Ամուսնություն կնքելիս ամուսնացողներից յուրաքանչյուրը պետք է դրսևորի գիտակցված ու կամային ցանկություն: Այդ առթիվ նրանց միջև կայացված համաձայնությունը պետք է տրված լինի ազատ ու անկախ: Այս հարցում չպետք է հարկադրանք լինի ոչ ամուսնացողներից մեկի, ոչ էլ երրորդ անձանց կողմից: Կողմնակի անձանց միջամտությունը երիտասարդ տղամարդու և աղջկա ամուսնության գործում պետք է կրի և իրոք կրում է խորհրդի, ցանկության, բարի կամքի արտահայտման բնույթ: Աշխարհահռչակ գրող Վ. Շեքսպիրն էր գրում, թե որդին, իհարկե, իրավունք ունի իր համար կին ընտրել, բայց հայրը, որն իր ամբողջ երջանկությունը թողել է արժանավոր սերնդի մեջ, նույնպես իրավունք ունի թեկուզ խորհրդով, մասնակցելու այդ գործին:

Սակայն ամուսնության գործում ընդհանրապես չպետք է լինի սպառնալիք, հարկադրանք, բռնություն: Օրենքի այն նորմը, թե ամուսնության համար անհրաժեշտ է ամուսնացող անձանց փոխադարձ համաձայնությունը, նկատի ունի գիտակցված ձևով, ներքին համոզմունքով արտահայտված համաձայնությունը, որտեղ պետք է բացառվի ցանկացած կողմնակի անձանց ազդեցությունն այն արտահայտելու գործում:

Գիտակցաբար որոշելու համար մարդու կյանքում տեղի ունեցող այնպիսի բացառիկ կարևոր հարց, ինչպիսին ամուսնանալն է, պահանջվում է, որ ամուսնացողները ոչ միայն հասուն լինեն սեռական ու ֆիզիկական առումներով, այլև հասած լինեն որոշակի տարիքի: Մեռային նորմալ կյանքով ապրելու և առողջ սերունդ ապահովելու համար անհրաժեշտ է, որ ամուսնացողները ֆիզիոլոգիական տեսակետից վերջնականապես կազմավորված, ամրացած լինեն: Դեռահաս, վաղահաս ամուսնությունը հղի է անցանկալի հետևանքներով, քանի որ դա կարող է ոչ միայն քայքայել ամուսնացողների առողջությունը, այլև պատճառ դառնալ անառողջ սերնդի: Ամուսնացող երիտասարդը պետք է տղամարդու հասունություն ունենա, որ կարողանա ստեղծի նորմալ ընտանիք:

ՀՀ ընտանեկան օրենսգրքով ամուսնական տարիք սահմանված է տղամարդկանց համար 18, կանանց համար՝ 17 տարին: Ամուսնական տարիքը չի կարող ոչ իջեցվել, ոչ էլ բարձրացվել: Օրենքով սահմանված չէ ոչ ամուսնական առավելագույն տարիք, ոչ էլ տղամարդու ու կնոջ տարիքային տարբերություն:

Քանի որ օրենսդրությամբ աղջիկն ամուսնանալու իրավունք է ձեռք բերում նախքան չափահաս դառնալը, ուստի մինչև չափահաս դառնալն ամուսնացած աղջիկը լրիվ գործունակություն է ձեռք բերում ամուսնանալու պահից:

Ամուսնացողների ամուսնական տարիքը պետք է լրացած լինի ոչ թե ամուսնությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմիններում գրանցելու համար դիմում տալու պահին, այլ ամուսնությունը գրանցելու պահին:

Ամուսնության վերը նշված պայմանների հետ միաժամանակ օրենքով սահմանված են որոշ արգելքներ, որոնց առկայության դեպքում չի կարող ամուսնություն տեղի ունենալ: Այդ արգելքների խախտումով կատարված ամուսնությունները դատական կարգով կարող են ճանաչվել չեղյալ, այսինքն՝ անվավեր:

Այսպես, ամուսնություն չի կարող գրանցվել, եթե պարզվի, որ ամուսնանալ ցանկացողներից թեկուզ մեկը գտնվում է այլ ամուսնության մեջ: Առանց այն էլ պետությունը կողմնակից է մենամուսնության: Մենամուսնությունն էլ համարվում է Հայաստանի ընտանեան իրավունքի առանցքային սկզբունք: Պետությունը բոլոր իրավական միջոցներով պաշտպանում է ցանկացած ընտանիքի շահերը, քանի այն իրավաբանորեն գոյություն ունի: Ուստի ամուսնությունը գրանցելու խնդրանքով դիմած յուրաքանչյուր ոք պետք է ապացուցի, որ ինքն այլ ամուսնության մեջ չի գտնվում: Այնուամենայնիվ եթե ամուսնանալ ցանկացողը նախկինում եղել է ամուսնացած, նոր ամուսնությունը գրանցելու համար պետք է ներկայացնի անհրաժեշտ փաստաթղթեր առ այն, որ նախկին ամուսնությունը դադարեցված է: Դրա ապացույց կարող են հանդիսանալ նախկին ամուսնու մահվան վկայականը, ամուսնուն դատարանի կողից անհայտ բացակայող ճանաչելու կամ նրան մահացած հայտարարելու մասին կայացրած և օրինական ուժի մեջ մտած վճիռը: Իսկ եթե

նրանց ամուսնությունը դադարել է ապահարզանի միջոցով, ապա պետք է ներկայացվի նրանց ամուսնալուծության վկայականը: Առանց այս փաստաթղթերի առկայության ՔԿԱԳ մարմինը նոր ամուսնություն չի կարող գրանցել: Նշանակում է օրինական կարգով դադարած ամուսնությունը նոր ամուսնության մեջ մտնելուն արգելք չի հանիսանում:

Այսպիսով, մենամուսնության սկզբունքի խախտումները կանխելու նպատակով պարտադիր է համարվում ամուսնությունը գրանցելու համար ՔԿԱԳ բաժնին համատեղ տրված դիմումի մեջ նշել, թե ամուսնանալ ցանկացողներից ամեն մեկը այլ ամուսնության մեջ գտնվել է, թե ոչ:

Ամուսնության գրանցման արգելք է համարվում նաև ամուսնանալ ցանկացողների մերձավոր ազգական լինելը: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11 հոդվածի համաձայն արգելվում է ամուսնություն կնքել ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների միջև: Նոր օրենսդրությամբ ընդարձակվել է այն անձանց շրջանակը, ովքեր չեն կարող ամուսնանալ իրար հետ:

Ամուսնության այս արգելքն առաջին հերթին ունի կենսաբանական ծագում: Մերձավոր ազգականների միջև ամուսնությունը ոչ միայն հակասում է բարոյականության նորմերին ու հասարակական բարոյական պատկերացումներին, այլև անթույլատրելի է կենսաբանական նկատառումներով: Մերձավոր ազգակիցների ամուսնությունը կարող է հասցնել մի շարք ժառանգական հիվանդությունների փոխանցման, (Նման հիվանդությունների թիվը անցնում է երեք հարյուրից), այսինքն՝ ամուսնացողների ոչ լիարժեք սերունդ տալուն: Այդ երևույթը մարդիկ նկատել են հազարամյակներ առաջ, սակայն գիտականորեն հիմնավորվել է վերջին դարերում:

Մերձավոր ազգականների միջև ամուսնությունն արգելելը հիմնվում է նաև մարկանց միջև այնպիսի սեռական մերձեցման անթույլատրելիության վրա, որի հետ չի կարող համակերպվել մարդկային հասարակության մեջ սահմանված արենապղծության կան-

խումը: Մերձավոր ազգակցական ամուսնությունների դեպքում 24-48 տոկոսով ավելի շատ են ի ծնե այլանդակները, անկենդան ծնված երեխաները և նորածինների մահացությունները: Ռիստի ամուսնության համար այսպիսի արգելք նախատեսելը լրիվ հիմնավորված է:

Ամուսնությունը կնքելուն արգելք է հանիսանում ոչ միայն ամուսնության հետևանքով առաջացած ազգակցությունը, այլև արտամուսնական ազգակցությունը: Օրինակ, եթե տղամարտ արտամուսնական կապերի հետանքով տարբեր մայրերից ծնվել են տղա ու աղջիկ, ապա վերջիններս գտնվում են արտամուսնական ազգակցության մեջ և համարվում են համահայր աղջիկ ու տղա: Նրանց ամուսնությունը ևս պետք է անթույլատրելի համարել ինչպես բարոյական, այնպես էլ նրանց սերնդի առողջության մասին պետական հոգատարության նկատառումներով:

Սակայն ամուսնության արգելք չի համարվում ամուսնանալ ցանկացողների միջև եղած բարեկամական, խնամիական կապը: Խոսքը վերաբերում է տղամարդու և կնոջ ազգականների միջև եղած խնամիական կապին: Այդ անձանց միջև արենակցական կապ գոյություն չունի:

Նույն հիմնավորմամբ կարող են իրար հետ ամուսնանալ նաև խորթ եղբայրն ու խորթ քույրը: Հիշեցնենք, որ խորթ եղբայրն ու խորթ քույրը ամուսիններից ամեն մեկի՝ նախկին ամուսնությունից ունեցած երեխաներն են: Նրանք ոչ ընդհանուր հայր ունեն, ոչ ընդհանուր մայր: Պրակտիկային հայտնի է այսպիսի դեպք. Պետիկյան Ա.-ն նախորդ ամուսնությունից ուներ 12 տարեկան տղա՝ Անդրանիկը, երբ մահացավ նրա կինը: Տարիներ հետո Պետիկյանը ամուսնացավ համազյուղացի Վարսիկի հետ, որն էլ այրիացել էր տարիներ առաջ, ունենալով Սիլվա անունով մի աղջիկ: Պետիկյանի ու Վարսիկի ամուսնանալուց հետո նրանց ընտանիքում ապրեցին նաև նրանց նախորդ ամուսնությունից ունեցած տղան ու աղջիկը: Քանի նրանք փոքր էին, իրար հետ վարվում էին որպես քույր ու եղբայր: Սակայն քանի նրանք հասունանում էին, նրանց հարաբերությունները փոխվեցին: Հետո սիրահարվեցին իրար: Նրանք, իհարկե, գիտեին իրենց ծնողների և իրենց անցյալի մասին: Եվ երբ խոսք եղավ

այն մասին, որ իրենց տղան ու աղջիկը ցանկանում են ամուսնանալ, ծնողները նույնիսկ ողջունեցին նրանց այդ քայլը: ՔԿԱԳ- բաժինը գրանցեց նրանց ամուսնությունը, քանի որ ամուսնացողները ազգակցական և արենակցական կապի մեջ չէին գտնվում:

Արգելվում է ամուսնությունը նաև որդեգրողի և նրա կողմից որդեգրված անձի միջև: Նման արգելքը բացատրվում է նրանով, որ «որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ ու պարտականություններ» (Ընտ.օր. 112 հոդվ. կետ 1): Նրանց միջև ամուսնությունն արգելելը բացատրվում է զուտ բարոյական նկատառումներով, քանի որ, որպես կանոն, որդեգրողների ու որդեգրվածների միջև արենակցական կապ չի լինում:

Վերջապես արգելվում է այն անձանց ամուսնությունը, որոնցից թեկուզ մեկը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ: Սովորաբար դատարանն անգործունակ է ճանաչում հոգեկան խանգարում ունեցող կամ տկարամիտ անձանց: Անգործունակ անձն ի վիճակի չէ ինքնուրույնաբար լուծել իր առօրեական հարցերը, էլ չենք խոսում այնպիսի հարցերի մասին, որոնք կապված են ամուսնության հետ, ընտանիք ստեղծելու, երեխաների դաստիարակության հետ: Եթե ամուսնությունը գրանցելու հարցով ՔԿԱԳ մարմինն դիմած անձանց շարժունակում, նրանց վարքագծում նկատվում են տարօրինակություններ, մի խոսքով կասկած է հարուցում նրանց ողջամտությունը, ՔԿԱԳ բաժնի աշխատակիցները պետք է պահանջեն, որ նրանք փաստաթուղթ բերեն իրենց առողջական վիճակի մասին: Շահագրգռված անձինք պետք է այդ հարցով դիմեն դատարանին, որն էլ համապատասխան բժշկական փաստաթղթերի հիման վրա կորոշի անձը գործունակ է, թե անգործունակ:

Ընհանրապես հոգեկան, նյարդային և նման հիվանդություններով տառապող անձինք զրկված չեն ընտանիք կազմելու իրավունքից: Ռիստի քանի դեռ չկա անձի անգործունակ լինելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը, ՔԿԱԳ մարմինն իրավունք չունի մերժել ամուսնությունը գրանցելու վերաբերյալ քաղաքացու խնդրանքը: Սակայն նա պետք է հավաստիանա, որ ամուս-

նությունը գրանցելու համար դիմող անձինք փոխադարձաբար իրազեկ են միմյանց առողջական վիճակին:

Ամուսնության մեջ մտնելը կամային ակտ է, իսկ կամքի արտահայտումը՝ ակտիվ գործողություն, որը ենթադրում է բանական, գիտակցված վերաբերմունք դեպի իր արարքները: Իր արարքներին ճիշտ գնահատական տալ կարող են միայն հոգեբանորեն ու հոգեպես առողջ մարդիկ:

Ամուսնության կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքներն սպառիչ են: ՔԿԱԳ մարմինների կողմից այլ հիմքով ամուսնության գրանցումը մերժելը կլինեք ոչ իրավաչափ: Ամուսնության գրանցման մերժումը կարող է բողոքարկվել դատարանին՝ ամուսնանալ ցանկացողների կամ նրանցից մեկի կողմից ՔԿԱԳ մասին օրենքի 10 հոդվածի 3-րդ մասի ուժով:

Ամուսնությունը կնքվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում և այն էլ ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ: Իսկ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցման պահից: Ամուսնության գրանցման կարգը սահմանված է ՔԿԱԳ մասին օրենքի 3-րդ գլխի կանոններով:

Ամուսնության պետական գրանցման համար հիմք է համարվում ամուսնացող անձանց համատեղ գրավոր դիմումը: Ըստ որում ամուսնության պետական գրանցումը կատարում է ամուսնացողներից մեկի բնակության վայրի ՔԿԱԳ մարմինը: Ամուսնությունը գրանցելու համար ամուսնացողների կողմից ներկայացվող դիմումի ձևը միասնական է Հայաստանի Հանրապետությունում: Դիմումի ձևաթերթը նրանց տրվում է ՔԿԱԳ բաժնում, որպեսզի այն լրացնեն ամուսնանալ ցանկացողները: Դիմումի մեջ պետք է հաստատվի նրանց ամուսնության փոխադարձ կամավոր համաձայնությունը և ամուսնական տարիքի հասնելը, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով սահմանված ամուսնությանն արգելք հանդիսացող հանգամանքների բացակայության փաստը:

Ամուսնությունը գրանցելու նպատակով ներկայացված դիմումը պետք է պարունակի տեղեկություններ հետևյալի մասին.

ա) ամուսնացող անձանցից յուրաքանչյուրի անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, կրթությունը, աշխատանքի վայրը և զբաղմունքը,

բ) ամուսնացող անձանց կողմից ընտրվող ազգանունը՝ ամուսնության պետական գրանցումից հետո,

գ) ընտանեկան դրությունը (ով որերորդ անգամ է ամուսնանում, քանի երեխա ունի),

դ) ամուսնացողների անձը հաստատող փաստաթղթերի տվյալները,

ե) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Ամուսնացողների կողմից լրացվող և ՔԿԱԳ քաժին ներկայացվող դիմումի ձևաթերթում կա հիշատակում այն մասին, որ ամուսնացողները «փոխադարձաբար տեղյակ են մեկը մյուսի առողջական վիճակի մասին»: Ամուսնացողների կողմից ազատ կամքով այն ստորագրելուց հետո դիմումը տրվում է ՔԿԱԳ մարմնի աշխատակցին: Ամուսնության մասին համատեղ դիմում տալու հետ միաժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ամուսնացողների իսկությունը հաստատող փաստա թղթերը, իսկ եթե անձը նախկինում գտնվել է ամուսնության մեջ, նաև նախորդ ամուսնության դադարման մասին փաստաթուղթ: Այդպիսի փաստաթուղթ է համարվում ամուսնու մահվան վկայականը, ամուսնուն անհայտ բացակայող ճանաչելու կամ ամուսնուն մահացած հայտարարելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռները, ամուսնալուծության վկայականը, տրված քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից:

Ինչպես արդեն ասվել է, ամուսնանալ ցանկացող անձինք ամուսնությունը գրանցելու դիմումը պետք է ներկայացնեն անձամբ: Սակայն եթե ամուսնացող անձանցից մեկը չի կարող ներկայանալ ՔԿԱԳ մարմին դիմումը տալու համար, ապա նրա կամքի արտահայտությունը կարող է ձևակերպվել առանձին հայտարարություններով: Իսկ նման հայտարարություն տվող անձանց ստորագրու-

յունները պետք է վավերացվեն օրենքով սահմանված կարգով: Հիշեցնենք, որ խոսքը վերաբերում է ամուսնությունը գրանցելու նպատակով դիմումը ՔԿԱԳ մարմին ներկայացնելուն:

ՔԿԱԳ մարմնի պաշտանատար անձը, ընդունելով դիմումը համապատասխան փաստաթղթերով հանդերձ, նշանակում է ամուսնությունը գրանցելու օր, որը պետք է լինի դիմումն ընդունելու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, բայց երեք ամսից ոչ ուշ: Ի դեպ, որոշված օրվա դրությամբ էլ պետք է որոշվի, թե ամուսնանալ ցանկացողներն ամուսնական տարիքի հասել են, թե ոչ:

Օրենքով հնարավոր է համարվում ամուսնությունը գրանցել նաև նախքան դիմելուց հետո մեկ ամիսը լրանալը: Այդ հնարավոր է համարվում, եթե առկա են հարգելի պատճառներ: ՔԿԱԳ մասին օրենքի 27 հոդվածը, որը հնարավոր է համարում ամուսնության գրանցումը նախքան դիմելուց հետո մեկ ամիսը լրանալը, չի նշում, թե ինչ հարգելի պատճառներ կարող են լինել: Նշվում է միայն, որ նման դեպքի համար հարգելի պատճառների ցանկը պետք է հաստատի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը: Իրականում խոսքը վերաբերում է, ասենք, ամուսնացողի ծանր առողջական վիճակին, միասին արտասահման աշխատանքի մեկնելուն, արդեն երեխա ունենալուն, կնոջ հղի լինելուն և այլն: Նման դեպքերում ՔԿԱԳ մարմնում ամուսնության պետական գրանցումը կատարվում է դիմումում նշված օրը, բայց ոչ շուտ, քան դիմում տալուց հետո եռօրյա ժամկետում:

Ամուսնությունը գրանցվում է ամուսնացողների պարտադիր ներկայությամբ: Արգելվում է ներկայացուցիչների մասնակցությամբ ամուսնություն գրանցել: Տվյալ դեպքում գործ ունենք քաղաքացիների զուտ անձնական իրավունքների հետ: Եթե ամուսնացող անձինք կամ նրանցից մեկը չեն կարող ներկայանալ ՔԿԱԳ մարմին ծանր հիվանդության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարգելի այլ պատճառներով, ապա ամուսնության պետական գրանցումն իրականացնող մարմինն ամուսնացող անձանց ներկայությամբ կարող է ամուսնության գրանցում կատարել տանը, բժշկական կամ այլ հաստատությունում: Կալանավորված կամ ազատագրկման վայրում պատիժ կրող անձանց հետ ամուսնության պետական գրան-

ցումն իրականացնում է ՔԿԱԳ մարմնի ղեկավարը քրեակատարողական հաստատության ղեկավարի համաձայնությամբ ընտրված վայրում: Ամուսնության գրանցման ժամանակ կարող են մասնակցել վկաներ երկու հոգուց ոչ ավելի, որոնք էլ նշվում են ամուսնության գրանցամատյաններում: Վկայի դերում կարող են հանդես գալ ամուսնացողների հարազատներ, ընկերներ: Պարզապես նրանց իսկությունը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում: ՉԻ պահանջվում նաև ամուսնությունը գրանցելու համար որևէ անձի համաձայնություն: Ամուսնացող անձինք, որոնք հասել են ամուսնական տարիքի, իրենք են լուծում իրենց ամուսնությունը գրանցելու հարցը: Այդ առումով հատուկ պետք է նշել, որ եթե ամուսնությունը գրանցելու պահին ամուսնանալ ցանկացողներն ունեն չափահաս տարիքի զավակներ, ապա նրանց համաձայնությունը իրենց ծնողի ամուսնության մասին չի պահանջվում:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները, ամուսնացող անձանց ցանկությամբ ամուսնության պետական գրանցումը կարող են կատարել հանդիսավոր պայմաններում: Դրա համար կարող են օգտագործվել Երիտասարական պալատները, Մշակույթի տները, հարսանեկան հանիսությունների սրահները, հարսանեկան արարողությունների պարագաները: Այս կանոնը սահմանվել է, նկատի ունենալով ամուսնության՝ քաղաքացիների կյանքում տեղի ունեցող այդ հույժ կարևոր, հիշարժան և նշանավոր իրադարձության նշանակությունը: Չմոռանանք, որ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները ամուսնության գրանցումը կատարում են հանդիսությամբ՝ ամուսնացող անձանց ցանկության դեպքում:

Չի բացառվում, որ ամուսնանալ ցանկացող անձինք ամուսնությունը գրանցելու համար դիմեն ՔԿԱԳ բաժին այն դեպքում, երբ առկա է ամուսնությանն արգելք հանդիսացող այս կամ այն հիմքը: Այդպիսիք բացահայտվելու դեպքում ՔԿԱԳ մարմնի ղեկավարը պարտավոր է մերժել ամուսնության պետական գրանցումը:

Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացին ցանկանում է ամուսնանալ երկրի սահմաններից դուրս, այսինքն արտասահմանյան որևէ երկրում, նա պարտավոր է ներկայացնել ՀՀ արդա-

րադատության նախարարության կողմից տրված տեղեկանք իր ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ (Օրենքի 27 հոդվածի 8 կետ):

Ամուսնացող անձինք իրենք են ընտրում ամուսնական ազգանուն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 25 հոդվածով սահմանված կարգով: Ըստ որում ամուսնացողները ըստ իրենց ցանկության, կարող են ընտրել ամուսնացողներից մեկի ազգանունը որպես ընդհանուր ազգանուն կամ պահպանել մինչամուսնական ազգանունը: Օրենսդրությամբ սահմանված է նաև ամուսնացողների կողմից իրենց ազգանունները զծիկով միացված ձևով ընտրելու իրավունքը: Սակայն ընդհանուր ազգանունը չի կարող լինել երկու ազգանունից ավելի:

Ամուսնալուծվելիս ամուսիններն իրավունք ունեն պահպանելու ընդհանուր ազգանունը կամ վերականգնելու իրենց մինչամուսնական ազգանունը: Այդ մասին ավելի մանրամասն տես ամուսնալուծության պետական գրանցմանը վերաբերող մասում:

Ամուսնության ակտի գրառման մեջ լրացվում են Օրենքի 29 հոդվածում նշված տեղեկությունները (ամուսնացողներից յուրաքանչյուրի մինչամուսնական և ամուսնական ազգանունները, նրանց անունը և հայրանունը, ազգությունը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, կրթությունը, աշխատանքի վայրը և զբաղմունքը, ընտանեկան դրությունը, (այրի է, ամուսնալուծված է, ամուսնացած չէ), ամուսնացողների անձնագրային այլ տվյալներ, ամուսնության ակտի գրանցման ժամանակը, համարը, ամուսնության պետական գրանցման վայրը, ամուսնությունը վկայող անձանց անունները, ազգանունները և նրանց ստորագրությունները:

Ամուսնությունը գրանցելուց հետո ամուսնացողներին տրվում է համապատասխան պաշտոնական փաստաթուղթ՝ ամուսնության վկայական: Այդ վկայականի սերիան ու համարը ևս գրվում է ամուսնության գրանցամատյանում:

Ամուսնացողները պետք է թեկուզ և համառոտակի, ծանոթ լինեն, թե ինչպիսի իրավունքներ ու պարտականություններ են ձեռք բերում ամուսնության հետևանքով:

Ամուսնության հետևանքով ամուսինների միջև առաջանում են ինչպես անձնական, այնպես էլ գույքային բնույթի հարաբերություններ: Ըստ որում զուտ նեղ, անձնական բնույթի հարաբերությունները իրավական կարգավորման չեն ենթարկվում: Դրանք կարգավորում են անհատներն իրենք, ելնելով հասարակական-բարոյական նորմերով: Սակայն որոշ անձնական հարաբերություններ կարգավորվում են օրենքով, քանի որ դրանք ունենալով անձնական բնույթ, նաև վերաբերում են երրորդ անձանց,:

Հայաստանի ընտանեկան օրենսգրքով ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում: Բացի դրանից, մայրության, հայրության, երեխաների դաստիարակության ու կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցեր ամուսինները լուծում են, ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից: Վերջապես, ամուսիններն ազատ են նաև ամուսնական ազգանուն ընտրելու հարցում, որի մասին ակնարկ արդեն արվել է:

Սակայն ամուսնության հետևանքով ամուսինները ձեռք են բերում նաև գույքային իրավունքներ և համապատասխան պարտականություններ: Նախ ամուսնությունը չի ազդում ամուսիններից յուրաքանչյուրի մինչամուսնական գույքի իրավական վիճակի վրա: Մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրին պատկանած գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը համարվում է նրա սեփականությունը:

Իսկ ահա ամուսնության համատեղ կյանքի ընթացքում ամուսինների վաստակած գույքը նրանց ընդհանուր համատեղ սեփականությունն է: Նշանակում է ցանկացած ընտանիքում, որպես կանոն, լինում է տարբեր իրավական վիճակում գտնվող գույք: Սակայն այդ գույքի վիճակներում կարող են տեղի ունենալ փոփոխություններ: Օրինակ, եթե ամուսինների ընդհանուր գույքի հաշվին ամուսիններից մեկի համար ձեռք է բերվել անհատական օգտագործման իր՝ հագուստ, կոշիկ և այլն, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է: Սակայն բացառություն են կազմում թանկարժեք առարկաները, այսինքն պերճանքի ու շքե-

ղության իրերը, որոնք մնալով այն կրողի մոտ, համարվում են ամուսինների ընդհանուր սեփականությունը:

Դրա հետ միաժամանակ ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը, ասենք՝ կատարվել է գույքի հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն:

Ամուսիններից յուրաքանչյուրն իր անձնական պարտքերով պատասխանատվություն է կրում սեփական գույքով, ինչպես նաև ընդհանուր գույքի մեջ իր ունեցած բաժնով: Իսկ ամուսիններն իրենց ընդհանուր պարտքերը հատուցում են ընդհանուր սեփականությամբ իրենց պատկանած գույքով:

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 27 հոդվածի համաձայն ամուսնացողները, ինչպես նաև ամուսիններն իրավունք ունեն կնքել ամուսնական պայմանագիր, որով որոշեն ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները ամուսնության ընթացքում և այն լուծվելու դեպքում: Եթե նրանք համաձայն չեն ամուսինների գույքային հարաբերությունները կարգավորող օրենսդրության նորմերի հետ, նրանք կարող են այլ կերպ լուծել հարցերը: Սակայն նրանք իրավունք չունեն ամուսնական պայմանագրով սահմանափակել ամուսինների իրավունակությունը կամ գործունակությունը, իրենց իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու նրանց իրավունքը: Քանի որ ամուսնական պայմանագիրը կոչված է կարգավորելու բացառապես ամուսինների գույքային հարաբերությունները, ուստի ամուսնական պայմանագիրը չի կարող կարգավորել ամուսինների անձնական ոչ գույքային հարաբերությունները, երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները: Պայմանագրով չեն կարող նախատեսվել անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոց պահանջելու իրավունքը սահմանափակող նորմ, ներառել այլ պայմաններ, որոնք ամուսիններից մեկին դնում են անբարենպաստ

իրավիճակի մեջ կամ հակասում են ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներին:

Ամուսինները նաև պարտավոր են նյութապես օժանդակել միմյանց: Եվ եթե նման օժանդակություն ցույց չի տրվում, դրա կարիքն ունեցող ամուսինը կարող է մյուսից պահանջել ապրուստի միջոց: Այդպիսի միջոցները կամավորապես չտրամադրելու դեպքում նա իրավունք ունի ապրուստի միջոց պահանջել դատական կարգով: Ամուսինն իրավունք ունի մյուսից պահանջել ապրուստի միջոց, եթե նա անաշխատունակ է ու կարիքավոր: Այլմենտ պահանջելու իրավունք ունի կինը հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը: Վերջապես ամուսնուց ալիմենտ պահանջելու իրավունք ունի անապահով ամուսինը, որ խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ չափահաս զավակին:

Բավարար միջոցներ ունեցող նախկին ամուսնուց ալիմենտ պահանջելու իրավունք ունի նախկին կինը հղիության ընթացքում, ընհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը: Նման իրավունք ունի նաև այն կարիքավոր ամուսինը, ով հաշմանդամ է դարձել մինչև ամուսնալուծվելը կամ ամուսնալուծվելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Ամուսինների կամ նախկին ամուսինների միջև ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայության բացակայության դեպքում ամուսնուց (նախկին ամուսնուց) բռնագանձվող ալիմենտի չափը որոշում է դատարանը կայուն դրամական գումարի ձևով, որ ենթակա է վճարման ամեն ամիս:

§ 3. Ամուսնալուծության պեպակալ գրանցումը

Ամուսնալուծությունը ամուսինների կենդանության օրոք ամուսնությունը օրենքով սահմանված կարգով դադարեցնելն է: Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 13 հոդվածի համաձայն ամուսինների կենդանության օրոք ամուսնությունը կարող է դադարել ամուսնալուծության միջոցով՝ ամուսինների կամ ա-

մուսիններից մեկի դիմումի հիման վրա, ինչպես նաև դատարանի կողմից անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալի դիմումի հիման վրա:

Անհրաժեշտ է նշել, որ ամուսնությունը միայն ամուսնալուծությամբ չի դադարում: Ամուսնությունը դադարում է ամուսիններից մեկի մահվան դեպքում, ինչպես նաև երբ ամուսիններից մեկը դատարանի վճռով անհայտ բացակայող է ճանաչվում կամ դատարանի վճռով մահացած է հայտարարվում: Ամուսիններից մեկի մահվամբ, բնականաբար, պետք է դադարի ամուսնությունը, քանի որ ամուսիններն ամուսնացել են մինչև իրենց կյանքի վերջը համատեղ ապրելու համար: Եվ երբ նրանցից մեկը մահանում է, պետք է դադարի այն:

Դատարանի կողմից ամուսիններից մեկին մահացած հայտարարելու վերաբերյալ վճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում նա ամուսնությունը համարվում է դադարեցված: Սակայն ոչ քաղաքացու մահվան, ոչ նրան դատական կարգով մահացած հայտարարելու հետևանքով ամուսնության դադարման փաստը չի գրանցվում ոչ մի տեղ: Ամուսնությունը համարվում է դադարեցված ամուսնու մահվան փաստի հիման վրա: Իսկ եթե դատարանի վճռով քաղաքացին անհայտ բացակայող է ճանաչվում, ապա նրա ամուսինն իրավունք է ստանում դիմել ՔԿԱԳ համապատասխան բաժին ամուսնալուծության խնդրանքով: Այս դեպքում ամուսնալուծություն է տեղի ունենում՝ մեկ ամուսնու միակողմանի հայտարարության հիման վրա:

Երկու ամուսինների կենդանի լինելու դեպքում ամուսնալուծությունը կարող է տեղի ունենալ ամուսինների կամ ամուսիններից մեկի դիմումի հիման վրա, ինչպես նաև դատարանի կողմից անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալի դիմումի հիման վրա:

Ամուսինների միջև ամուսնալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում նրանց ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում: Ըստ որում նշանակություն չունի նրանց ամուսնական համատեղ կյանքի տևողությունը, նրանց անչափահաս երեխաներ ունենալը, նրանց միջև գույքա-

յին կամ այլ բնույթի վեճերի առկայությունը: Նման վեճերը կարող են լուծվել դատարանի կողմից ընդհանուր հայցային կարգով: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ օրենսդիրը ՔԿԱԳ մարմիններին չի պարտավորեցնում աշխատանք տանել ամուսիններին հաշտեցնելու համար: Սակայն քանի որ ամուսնալուծության պետական գրանցումն իրականացվում է ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, բայց երեք ամսից ոչ ուշ, ուստի ամուսինների համար օրենքով սահմանված եռամսյա ժամկետը, գրույցները, որոնք, որպես կանոն, ՔԿԱԳ մարմինների աշխատակիցները վարում են ամուսնալուծության համար դիմում տված անձանց հետ, այս ամենն ուղղված են այն բանին, որ հնարավորության սահմաններում պահպանեն ընտանիքը:

Ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է՝

ա) որոշել, թե ամուսնալուծությունից հետո ծնողներից ում հետ պետք է ապրեն երեխաները,

բ) որոշել, թե որ ծնողից և ինչ չափով պետք է ալիմենտ բռնագանձվի,

գ) ամուսինների կամ նրանցից մեկի պահանջով կատարել նրանց ընհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանումը,

դ) ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող մյուս ամուսնու պահանջով որոշել այդ միջոցների չափը:

Այստեղ էլ պետք է նկատի ունենալ, որ եթե գույքի բաժանումը շոշափում է երրորդ անձանց շահերը, ապա դատարանը կարող է գույքի բաժանման մասին պահանջն առանձնացնել որպես առանձին վարույթ:

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսիններից մեկի դիմումի հիման վրա ամուսնալուծություն է կատարվում, եթե մյուս ամուսինը՝

ա) դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող,

բ) դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ,

գ) հանցանք կատարելու համար դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով:

Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե

ա) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը,

բ) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց,

գ) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով:

Ավելացնենք նաև, որ ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանն իրավունք ունի միջոցներ ձեռնարկել ամուսիններին հաշտեցնելու համար և իրավունք ունի գործի քննությունը հետաձգել՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչև երեքամսյա ժամկետ:

Եթե նշված ժամկետը լրանալուց հետո ամուսինները կամ ամուսիններից մեկը պնդում են ամուսնալուծվելու իրենց պահանջը, դատարանը կատարում է ամուսնալուծություն:

Ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում գրանցելու համար պետք է լինեն պետական գրանցման հիմքեր: Օրենքի 31 հոդվածի համաձայն մման հիմքեր համարվում են՝

ա) ամուսինների համատեղ դիմումը՝ ՔԿԱԳ մարմիններում ամուսինների միջև փոխադարձ համաձայնության առկայությամբ ամուսնալուծություն կատարելու համար,

բ) ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսը դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ կամ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով,

գ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքում, մասնավորապես երբ բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը, երբ ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը ՔԿԱԳ մարմիններում կատարելուց, կամ երբ ամուսինները ցանկանում են ամուսնալուծությունը լուծել դատական կարգով՝ փոխադարձ համաձայնությամբ:

Ամուսնալուծության պետական գրանցումը ևս կատարում է ամուսինների (ամուսիններից մեկի) բնակության վայրի ՔԿԱԳ մարմինը:

Ամուսնալուծության մասին համատեղ դիմումում ամուսինները պետք է նշեն, որ իրենք փոխադարձաբար համաձայն են ամուսնալուծվելու, որ իրենց այդ կամքն արտահայտում են կամավորապես, առանց կողմնակի անձանց միջամտության: Դրա հետ միաժամանակ պետք է դիմումում նշվեն իրենց անկետային տվյալները՝ ամուսիններից յուրաքանչյուրի անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, կրթությունը, աշխատանքի վայրը և զբաղմունքը, այն ազգանունները, որոնք ընտրվում են ամուսիններից յուրաքանչյուրի կողմից ամուսնալուծությունից հետո (տես Օրենքի 33 հոդվածը):

Ամուսնալուծության պետական գրանցումն իրականացվում է ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, բայց երեք ամսից ոչ ուշ երկու ամուսինների ներկայությամբ կամ ամուսիններից մեկի պարտադիր ներկայությամբ և մյուսի սահմանված կարգով վավերացված համաձայնությամբ:

ՔԿԱԳ մարմիններում պետք է գրանցվեն ամուսիններից մեկի դիմումի հիման վրա կատարվող ամուսնալուծությունները (տես Օրենքի 34 հոդվածը): Այդ նպատակով տրված դիմումի մեջ պետք է նշված լինեն ոչ միայն դիմող ամուսնու մասին տեղեկությունները, անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, կրթությունը, աշխատանքի վայրը, զբաղմունքը, նաև այն ազգանունը, որն ամուսնալուծությունից հետո ընտրում է ամուսնալուծվել ցանկացող ամուսինը, այլև մյուս ամուսնու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վերջին հայտնի վայրը:

Ամուսնալուծության մասին դիմումի հետ միաժամանակ պետք է ամուսնալուծվել ցանկացող ամուսինը ներկայացնի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը ամուսիններից մյուսին անհայտ բացակայող կամ անգործունակ ճանաչելու մասին կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի պատճենը

մյուս ամուսնուն երեք տարուց ոչ պակաս ժամկետով ազատագրվածն դատապարտելու մասին:

Ամուսնալուծության պետական գրանցումն իրականացվում է ամուսնալուծվել ցանկացող ամուսնու պարտադիր ներկայությամբ:

ՔԿԱԳ բաժինը պարտավոր է դիմումն ստանալուց հետո երեք օրվա ընթացքում տվյալ գործով շահագրգռված անձանց՝ պատիժը կրող ամուսնուն, անհայտ բացակայող կամ անգործունակ ճանաչված ամուսնու գույքի հավատարմագրային կառավարչին կամ խնամակալին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ խնամակալության ու հոգաբարձության մարմնին տեղյակ պահել ամուսնալուծության մասին ստացված դիմումի, ամուսնալուծության պետական գրանցման ժամանակի և ամուսնալուծությունից հետո ընտրված ազգանվան մասին (Օրենքի 34 հոդվածի 4 կետ):

Դատարանը պետք է ամուսնալուծության գործ հարուցի, եթե ամուսինները կամ նրանցից մեկը այդ հարցով դիմել են իրեն: Սակայն դատական պրակտիկայում հանդիպում են զավեշտի հասնող դեպքեր: Օրինակ, քաղ. Ա.Գ.-ն դիմել է դատարան իր կնոջը՝ Ս.-ին անհայտ բացակայող ճանաչելու հայցով: Իր դիմումում նա հայտնում է, որ ութ տարի առաջ կինը գնացել է Ռուսաստան և այդ ամբողջ ընթացքում նրա մասին ինքը լուր չունի: Դատարանը ապացուցված համարելով, որ քաղ.-ուհի Ս.-ն արդեն երկար ժամանակ բացակայում է իր մշտական բնակության վայրից, նրան հայտարարել է մահացած և ամուսնալուծել ամուսիններին:

Եթե ամուսնալուծությունը կատարվել է դատական կարգով, ապա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ամուսնալուծության պետական գրանցման համար ամուսինների դիմումին կամ անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալի դիմումին պետք է կցվեն ամուսնալուծության մասին դատարանի կայացրած վճռի պատճենը և ամուսինների (ամուսիններից մեկի) կամ անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալի անձը հաստատող փաստաթղթերը: Եթե այդ անձինք չեն կարող օբյեկտիվ պատճառներով ներկայանալ ՔԿԱԳ բաժին, ապա նրանք կարող են գրավոր լիազորել այլ անձանց՝ դիմում տալու ամուսնալուծության պետական գրանցման համար:

Օրենքի 36 հոդվածի համաձայն ամուսնությունը գրանցելիս իր ազգանունը փոխած ամուսինն իրավունք ունի ամուսնալուծությունից հետո պահպանել այդ ազգանունը կամ իր ցանկությամբ ամուսնալուծությունը գրանցելիս իրեն վերապահել իր մինչամուսնական ազգանունը: Ըստ որում ոչ ՔԿԱԳ մարմինների աշխատողները, ոչ էլ մյուս ամուսինը իրավունք չունեն պնդելու, որ նա գրվի իր մինչամուսնական ազգանունով: Անկախ նրանից, թե ով է որոշել ամուսնալուծության հարցը՝ դատարանը, թե ՔԿԱԳ մարմինը, մինչամուսնական ազգանունով գրվելու դիմումը բոլոր դեպքերում տրվում է ամուսնալուծությունը գրանցող ՔԿԱԳ մարմնին: Ազգանվան փոփոխում կարող է կատարվել միայն ամուսնալուծությունը գրանցելու պահին: Այդ պահը բաց թողնելու դեպքում հարցը կարող է լուծվել անունը փոխելու վերաբերյալ ընդհանուր կանոնների համաձայն:

Ամուսնալուծության մասին գրանցամատյանում գրանցվում են բազմաթիվ տվյալներ: Օրենքի 37 հոդվածի համաձայն ամուսնալուծության ակտի գրառման մեջ պետք է գրվեն ամուսնալուծվող անձանցից յուրաքանչյուրի անունը, հայրանունը, ազգանունը (ամուսնալուծությունից առաջ և հետո), ազգությունը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, կրթությունը, աշխատանքի վայրը, զբաղմունքը, և որերորդ ամուսնությունը, մինչև 18 տարեկան ընդհանուր երեխաների քանակը, ամուսնալուծության գրանցման համար հիմք համարվող փաստաթղթի տվյալները, ամուսնության ակտի գրանցման վայրը, ժամանակը և համարը և այլ տվյալներ:

Ամուսնալուծությունը գրանցելուց հետո ՔԿԱԳ բաժինը տալիս է ամուսնալուծության վկայական, որը պարունակում է բազմաթիվ տվյալներ ամուսնալուծված նախկին ամուսինների մասին, ինչպես նաև գրառուներ են կատարվում ամուսնության դադարման ժամանակի, ամուսնալուծության ակտի գրառման ժամանակի ու համարի, այն կատարելու վայրի, ամուսնալուծության վկայական տալու ժամանակի մասին:

Վերջապես Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը ամուսնալուծության մասին գրանցում կատարելուց հետո

ամուսնալուծության վկայական է տալիս ամուսնալուծվող անձանցից յուրաքանչյուրին:

§ 4. Հայրության որոշման պետական գրանցումը

Երեխայի ծնունդը գրանցելիս ինչպես ծնունդների գրանցամատյանում, այնպես էլ երեխայի ծննդյան վկայականում պարտադիր կարգով պետք է գրառումներ արվեն երեխայի մոր և հոր մասին: Իսկ եթե հոր ու մոր մասին տվյալները հայտնի չեն, օրինակ՝ երեխան ընկեցիկ է, պետք է գրանցեն այդ փաստը:

ՀՀ ընտանեկան օրենսդրությամբ երեխայի սերունդ մորից (մայրությունը) հաստատվում է երեխայի բժշկական կազմակերպությունում տվյալ մորից ծնված լինելու փաստը հավաստող փաստաթղթերի, իսկ եթե երեխան ծնվել է բժշկական կազմակերպությունից դուրս՝ համապատասխան բժշկական փաստաթղթերի, վկաների հայտարարությունների կամ ապացույցների հիման վրա: Եվ ընդհանրապես երեխայի մոր վերաբերյալ գրանցումը որևէ դժվարության հետ գրեթե կապված չի լինում: Ուրիշ է արդեն երեխայի հայրությունը գրանցելը:

Եթե երեխան ծնվել է ամուսնության մեջ գտնվող անձանցից, ապա երեխայի հայր է ճանաչվում երեխայի մոր ամուսինը, եթե այլ բան չի ապացուցվել: Երեխայի մոր ամուսնու հայրությունը հավաստվում է նրանց ամուսնությունը պետականորեն գրանցված լինելու փաստով: Սակայն չի բացառվում, որ ամուսնության մեջ գտնվող կնոջից ծնված երեխայի հայրն ուրիշը լինի: Օրինակ երեխայի մայրը կարող է հայտարարել, որ ճիշտ է, ինքը գրանցված ամուսնության մեջ է գտնվում մեկի հետ, սակայն երեխան սաղմնավորվել է այլ անձից: Պրակտիկային հայտնի է նման դեպք: Քաղ.-ու-հի Պետրովան ծննդաբերությունից հետո երեխայի ծնունդը գրանցելու համար ներկայացրել է նաև իր ամուսնության վկայականը, սակայն ՔԿԱԳ մարմնի աշխատակցուհուն խնդրել է երեխայի հայրանունը չգրել ամուսնության վկայականով իր ամուսնու անունով, քանի որ իր ամուսինը արդեն հինգ տարի է իր հետ չի ապրում: Նա ոչ մի կապ չունի իր հետ, իրեն էլ հայտնի չէ նրա գտնվելու վայրը:

Հիմք ընդունելով երեխայի մոր հայտարարությունը, ՔԿԱԳ մարմինը երեխայի հայրությունը գրանցել է մոր հայտարարության հիման վրա:

ՔԿԱԳ մարմիններում հայրություն է գրանցվում նաև այն դեպքերում, երբ երեխայի հայրությունը որոշվել է դատական կարգով: Երբ դատական կարգով հաստատվել է հայրության ճանաչման փաստը: Իսկ եթե վիճարկվել է հայրության վերաբերյալ արված գրառումը, ապա ՔԿԱԳ բաժնում գրանցվում է երեխայի հայրությունը դարձյալ դատարանի վճռի հիման վրա:

Եթե երեխան ծնվել է ամուսնալուծությունից կամ ամուսնությունն անվավեր ճանաչելուց կամ երեխայի մոր ամուսնու մահվան պահից հետո՝ 300 օրվա ընթացքում, ապա երեխայի հայրությունը որոշվում է մոր դիմումի հիման վրա:

Այլ իրավիճակ է ստեղծվում, երբ պարզվում է, որ երեխա է ծնվել ամուսնության մեջ չգտնվող ծնողներից: Նման դեպքում ՔԿԱԳ մարմիններում երեխայի ծնունդը գրանցվում է երեխայի հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա:

Մոր մահվան կամ դատարանի կողմից նրան անգործունակ ճանաչվելու կամ բնակության վայրը որոշելու անհնարինության կամ ծնողական իրավունքներից զրկվելու դեպքում երեխայի հայրությունը կարող է որոշվել երեխայի հոր դիմումի հիման վրա, սակայն խնամակալության ու հոգաբարձության մարմնի համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության եպքում՝ դատարանի վճռով:

Այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ երեխայի ծնվելուց հետո հայրությունը որոշելու մասին համատեղ դիմում ներկայացնելը կարող է դառնալ անհնար կամ դժվարանալ, ապագա երեխայի ծնողները, որոնք ամուսնության մեջ չեն գտնվում, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին նման դիմում կարող են ներկայացնել մոր հղիության ընթացքում: Այդ դեպքում երեխայի ծնողների մասին գրառումը կատարվում է երեխայի ծնվելուց հետո:

Ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում, եթե բացակայում է ծնողների համատեղ դիմումը կամ երեխայի հոր դիմումը, ապա որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստը (հայրությունը) կարող է որոշվել դատական կարգով՝ համապատասխանաբար ծնողներից մեկի կամ մոր, երեխայի խնամակալի (հոգաբարձուի), կամ այն անձի դիմումի հիման վրա, որի խնամքին է գտնվում երեխան, իսկ երեխայի չափահաս դառնալուց հետո՝ վերջինիս ներկայացրած դիմումի հիման վրա: Հայրությունը դատական կարգով որոշելու գործերով դատարանը կարող է հաշվի առնել ցանկացած ապացույց, որն ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի այդ անձից:

Հայրությունը որոշելու վերաբերյալ դատարանի կայացրած վճռի հիման վրա երեխայի հայրությունը գրանցվում է Քաղաքացիական կացության ակտերի գրանց ման գրանցամատյաններում:

Վերջապես երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող, բայց իրեն երեխայի հայր համարող անձի մահվան դեպքում դատարանը կարող է ճանաչել վերջինիս որպես երեխայի հայր, այսինքն՝ ճանաչել՝ հայրության ընդունման փաստը:

Չափահաս անձի նկատմամբ հայրության որոշում թույլատրվում է միայն իր համաձայնությամբ, իսկ եթե նա դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ՝ նրա խնամակալի (հոգաբարձուի) կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի համաձայնությամբ:

Հայրության որոշման պետական գրանցումն իրականացնում է երեխայի՝ ամուսնության մեջ չգտնվող հոր կամ մոր բնակության վայրի կամ երեխայի ծննդի պետական գրանցման վայրի, կամ հայրության կամ հայրության ճանաչման փաստի որոշման մասին վճիռ կայացրած դատարանի գտնվելու վայրի ՔԿԱԳ մարմինը:

Երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձից սերված երեխայի հայրությունը որոշվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ երեխայի հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա: Մոր մահվան կամ դատարանի կողմից վերջինիս անգործունակ ճանաչվելու կամ բնակության վայրը որոշելու անհնարինության կամ ծնողական իրա-

վունքներից գրկվելու դեպքում երեխայի հայրությունը որոշվում է երեխայի հոր դիմումի հիման վրա՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությամբ իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի վճռով:

Այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ երեխայի ծնվելուց հետո հայրությունը որոշելու մասին համատեղ դիմում ներկայացնելը կարող է դառնալ անհնար կամ դժվարանալ, ապա երեխայի ծնողները, որոնք ամուսնության մեջ չեն գտնվում, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին նման դիմում կարող են ներկայացնել մոր հղիության ընթացքում: Այդ դեպքում երեխայի ծնողների մասին գրառումը կատարվում է երեխայի ծնվելուց հետո (Ընտօր 35 հոդվ 3 կետի 2 մասը):

Հայրության որոշման մասին երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող հոր և մոր համատեղ գրավոր դիմումը ներկայացվում է ՔԿԱԳ մարմին: Հայրության որոշման համատեղ դիմումը կարող է տրվել երեխայի ծննդի գրանցման ժամանակ կամ դրանից հետո:

Հայրության որոշման պետական գրանցման համատեղ դիմումում պետք է հաստատվի երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի կողմից հայրության ճանաչման փաստը և հայրության որոշման մասին նոր համաձայնությունը: Այդ դիմումում պետք է նշվեն բազմաթիվ տեղեկություններ երեխայի մոր, իրեն երեխայի հայր համարող անձի մասին ըստ ՔԿԱԳ մասին օրենքի 50 հոդվածի:

Եթե հայրության որոշման պետական գրանցումը կատարվում է այդ մասին դիմում տալու պահին արդեն չափահաս դարձած անձի նկատմամբ, ապա այդ դիմումի հետ միաժամանակ պետք է ներկայացվի չափահաս անձի՝ հայրության որոշման մասին գրավոր համաձայնությունը: Չափահաս անձի համաձայնությունը կարող է արտահայտված լինել առանձին դիմումով կամ հոր և մոր համատեղ դիմումում ստորագրելով: Նշված համաձայնության բացակայության դեպքում հայրությունը կարող է որոշվել դատական կարգով: Հետևաբար հայրության որոշման պետական գրանցում կարող

է կատարվել, եթե կան դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումները հայրության որոշման վերաբերյալ, կամ հայրության ճանաչման փաստի որոշման վերաբերյալ: Երեխայի հոր մասին տվյալները հայրության որոշման ակտի գրառման մեջ լրացվում են հայրության որոշման կամ հայրության ճանաչման փաստի հաստատման մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

Օրենքի 48 հոդվածի համաձայն հայրության որոշման պետական գրանցման հիմքեր են հանդիսանում՝

ա) երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող հոր և մոր համատեղ դիմումը,

բ) երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող, սակայն երեխայի հայր համարվող անձի դիմումը,

գ) հայրության կամ հայրության ճանաչման փաստի որոշման մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմինը հայրության որոշումը գրանցելուց հետո կազմում և ծնողներին կամ նրանցից մեկին տալիս է հայրության որոշման վկայական նրանց խնդրանքով (Օրենքի 56 հոդվածի կետ 1):

§ 5. Որդեգրման պետական գրանցումը

Որդեգրումը իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների ու զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ (Ընտօր. 112 հոդվ. կետ 1):

Որդեգրումը համարվում է ծնողներ չունեցող կամ ծնողներից պատշաճ դաստիարակություն ու խնամք չստացող երեխաների ընտանեկան դաստիարակությունը կազմակերպելու, «առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման նախապատվելի ձև»: Որդեգրումը ծնողագուրկ երեխաների, ինչպես նաև թեկուզ ծնողներ ունեցող, սակայն նրանցից պատշաճ խնամք ու դաստիարակություն չստացող երեխաների՝ վաղուց կյանքի քննությանը

բռնած իրավաբանական ինստիտուտ է, հայտնի դեռևս Հին Հռոմեական իրավունքին:

Նախկինում որդեգրումը կատարվում էր տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ, իսկ խորհրդային իշխանության տարիներին՝ շրջանային ու քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեների որոշմամբ: Այդ գործում միասնական պրակտիկա ունենալու և հարցը պրոֆեսիոնալ բարձր կարգով լուծելու համար ներկայումս որդեգրումը կատարում է դատարանը՝ երեխային որդեգրել ցանկացող անձի (անձանց) դիմումով: Որդեգրում թույլատրվում է միայն երեխաների նկատմամբ և ելնելով նրանց շահերից: Իսկ երեխա համարվում է դեռևս տասնութ տարեկան չդարձած, այսինքն՝ չափահասության տարիքի չհասած անձը: Եվ քանի որ որդեգրումը անչափահաս երեխաների կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններից է և նրա հետ կապվում է բազմաթիվ անձնական իրավունքների, նաև բազմաթիվ պարտականությունների առաջացում, ուստի քաղաքացիական կացության ակտերում գրանցման ենթակա է նաև որդեգրումը (տես ՔԿԱԳ մասին օրենքի 5-րդ գլուխը՝ 39-47 հոդվածներով):

Որդեգրելու իրավունք ունեն միայն չափահաս քաղաքացիները՝ ինչպես ամուսիններ, այնպես էլ չամուսնացած տղամարդ կամ կին: Սակայն որդեգրելու իրավունք չունեն դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք, դատական կարգով ծնողական իրավունքներից զրկված կամ ծնողական իրավունքները սահմանափակված անձինք, այն անձինք, որոնք առողջական վիճակով չեն կարող իրականացնել ծնողական իրավունքներ, այն ամուսինները, որոնցից մեկը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, նախկին որդեգրողները, եթե որդեգրումը դատարանով վերացվել է նրանց մեղքով, այն անձինք, ովքեր որ որդեգրման պահին չունեն այնպիսի եկամուտ, որը կապահովի որդեգրվող երեխայի նվազագույն կենսամակարակը:

Երեխայի որդեգրման համար առաջին հերթին պահանջվում է երեխայի հարազատ ծնողների համաձայնությունը: Նման համաձայնություն չի պահանջվում, եթե նրանք անհայտ են, կամ դատա-

րանը ճանաչել է անհայտ բացակայող, կամ նրանց ճանաչել է անգործունակ, եթե դատարանի վճռով ծնողը (ծնողները) զրկված է ծնողական իրավունքներից կամ սահմանափակված են նրա ծնողական իրավունքները: Որդեգրման համար չի պահանջվում այն ծնողի համաձայնությունը, որը դատարանով անհարգելի ճանաչված պատճառներով մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չի ապրում և խուսափում է նրան դաստիարակելուց ու պահելուց:

Երեխային որդեգրելու համար, անշուշտ, պետք է լինի նաև որդեգրողների համաձայնությունը, որն արտահայտվում է գրավոր ձևով՝ դատարանին ներկայացված հայցադիմումում: Եթե որդեգրել ցանկանում է ամուսիններից միայն մեկը, ապա անպայման պետք է ներկայացվի նաև մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը:

Վերջապես որդեգրման համար պահանջվում է 10 տարեկան դարձած երեխայի համաձայնությունը: Սակայն եթե մինչև որդեգրման համար դիմում տալը երեխան ապրել է որդեգրողի ընտանիքում և նրան համարում է իր ծնողը, ապա որդեգրումը բացառության կարգով կարող է կատարվել առանց որդեգրվող երեխայի համաձայնության:

Որպես կանոն, որդեգրվողները կորցնում են անձնական և գույքային իրավունքները և ազատվում իրենց ծնողների ու նրանց ազգականների նկատմամբ ունեցած պարտականություններից: Սակայն առանձին դեպքերում շահագրգռված անձանց խնդրանքով կարող են պահպանվել որդեգրվողների իրավահարաբերությունները ծնողներից մեկի կամ մահացած ծնողի պայի, տատի հետ: Բայց այդ մասին պետք է նշված լինի որդեգրման մասին դատարանի վճռի մեջ:

Որդեգրված երեխաներն ու նրանց սերունդը որդեգրողների և նրանց ազգականների նկատմամբ, իսկ որդեգրողներն ու նրանց ազգականները որդեգրված երեխաների ու նրանց սերունդի նկատմամբ իրենց անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներով ու պարտականություններով հավասարեցվում են ծագումով ազգականներին:

Որդեգրողները պետք է ճիշտ կազմակերպեն երեխայի առօրյան, նրան դաստիարակեն մարդկային ու բարոյական բարձր հատ-

կանիչներով, հոգատար լինեն նրա նկատմամբ: Նրանք պետք է ոչ միայն ապահովեն երեխայի կրթություն ստանալը, այլև նրա նախասիրություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալը: Որդեգրված երեխան որդեգրողի ընտանիքում պետք է զգա որպես այդ ընտանիքի լիիրավ անդամը, հասկանալի է, չիմանալով, որ իր խնամքով ու դաստիարակությամբ զբաղվող մայրիկն ու հայրիկը իր հարազատ ծնողները չեն: Սակայն եթե որդեգրողները չարաշահեն իրենց իրավունքները, ճիշտ չիրականացնեն իրենց իրավունքները, բարեխղճորեն չկատարեն իրենց իսկ կողմից կամավորապես ստանձնած պարտականությունները, որդեգրումը կարող է վերացվել դատական կարգով:

Հաշվի առնելով որդեգրման ինստիտուտի կարևոր հասարակական ու պետական նշանակությունը, ինչպես նաև այն դիտելով որպես քաղաքացիների կյանքում կատարվող լուրջ իրադարձություն, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այն ենթակա է գրանցման քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում:

Որդեգրման պետական գրանցման համար հիմք է համարվում որդեգրման մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը: Իսկ որդեգրման պետական գրանցում կարող է կատարել որդեգրման մասին վճիռ կայացրած դատարանի կամ որդեգրողների (որդեգրողի) բնակության վայրի ՔԿԱԳ մարմինը:

Երեխայի որդեգրման մասին դատարանի կայացրած վճիռն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում այն պետք է գրանցվի ՔԿԱԳ բաժնում: Եթե որդեգրումը գրանցելու համար այդ ժամանակահատվածում դիմում չի ներկայացվում, ապա ՔԿԱԳ մարմինը որդեգրման մասին դատարանի առաքած օրինական ուժի մեջ մտած վճռի քաղվածքի հիման վրա ծննդյան ակտի գրանցման մեջ սահմանված կարգով կատարում է որդեգրման մասին նշում: Ըստ որում եթե երեխայի որդեգրման մասին դատարանի վճռի հիման վրա երեխայի որդեգրողները (որդեգրողը) գրառվում են որպես նրա ծնողներ (ծնող), ապա նման տեղեկությունները լրացվում են որդեգրման ակտի գրառման մեջ (ՔԿԱԳ մարմինների մասին Օրենքի 42 հոդվ.):

Որդեգրման ակտը գրանցելուց հետո ՔԿԱԳ մարմինը տալիս է որդեգրման վկայական: Որդեգրման վկայականը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

ա) երեխայի անունը, հայրանունը, ազգանունը մինչև որդեգրումը և որդեգրումից հետո, ծննդյան վայրը և ժամանակը,

բ) որդեգրողների (որդեգրողի) անունը, հայրանունը, ազգանունը, քաղաքացիությունը, ազգությունը՝ որդեգրողի (որդեգրողների) ցանկությամբ՝ որդեգրման ակտի գրառմանը համապատասխան,

գ) որդեգրման ակտի գրառման ժամանակը և համարը,

դ) որդեգրման պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ մարմնի անվանումը),

ե) որդեգրման վկայական տալու ժամանակը:

Որդեգրման ակտի գրառման հիման վրա երեխայի ծննդի ակտի գրառման մատյանում կատարվում են համապատասխան փոփոխություններ օրենքով սահմանված կարգով:

Երեխայի որդեգրման մասին դատարանի վճռով երեխայի ծննդյան վայրի փոփոխության դեպքում ՔԿԱԳ մարմինը կատարում է երեխայի ծննդի ակտի նոր գրառում: Երեխայի ծննդի ակտի նոր գրառման տվյալները (գրանցման վայրը, ակտի գրանցման համարը և ժամանակը լրացվում են երեխայի ծննդի ակտի նախկին գրառման մեջ: Բնականաաբ երեխայի ծննդի ակտի նոր գրառման վայրի ՔԿԱԳ մարմինը փոփոխությունների հիման վրա տրամադրում է երեխայի ծննդյան վկայական:

§ 6. Անվան փոփոխման պետական գրանցումը

«Երեխայի իրավունքների մասին» Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն ամեն մի երեխա ունի «իր անհատականությունը պահպանելու իրավունք, ներառյալ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը»: Ընդ որում դրանք հարգելը դիտվում է Կոնվենցիայի ամեն մի մասնակից պետության պարտականությունը: Ելնելով այդ Կոնվենցիայի և «Երեխայի իրավունքների մասին»

Հայաստանի Հանրապետության 1996 թ. մայիսի 29-ի օրենքի¹⁵ պահանջներից, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 45 հոդվածը սահմանում է, որ «երեխան ունի անուն, հայրանուն և ազգանուն ունենալու իրավունք»:

Գիտականորեն հիմնավորված է, որ բոլոր ժամանակներում մարդիկ ունեցել են անուն, հայրանուն, ազգանուն, քանի որ դրանք ծառայում են յուրաքանչյուրին նշելու համար և հնարավորություն են տալիս անհատականացնելու մարդուն ինչպես անմիջականորեն նրա հետ շփվելիս, այնպես էլ ընհանրապես նրա մասին խոսելի: Սակայն տարբեր ժողովուրդների մոտ անհատ անձինք ճանաչվում են հատկապես անունով: Օրինակ ռուսական իրականության մեջ ոչ քիչ թվով կայսրեր պատմության մեջ մնացել են միայն իրենց անունով (օրինակ՝ Իվան Կալիտան), թաթար-մոնղոլների մոտ՝ Լենկթեմուրը, Բաթու խանը, տասնյակ խաներ), ոմանք հայտնի են իրենց անունով ու ազգանունով (Կարլ Մարքսը, Ավգուստ Բեբելը, շատ շատերը հատկապես ռուսական իրականության մեջ վերջին հարյուրամյակներում): Հայ իրականության մեջ լայն կիրառություն ունի անհատին անունով, հայրանունով և ազգանունով կոչելը: Այդ տեսակետից հայ մարդու կյանքում դժվար է գերազանահատել անձի անվան, հայրանվան, ազգանվան տվյալները, քանի որ դրանք գործածվում են ոչ միայն ընտանիքում, կենցաղում, այլև պաշտոնական գրագրություններում, քաղաքացիների փաստաթղթերում:

Անունը մարդուն անհատականացնելու միջոց է, իսկ ազգանունը նրա տոհմական անունն է, որ նրան փոխանցվում է իր ծնողներից: Անձին անհատա կանացնում են ոչ միայն նրան շնորհված անունն ու ազգանունը, այլև նրա հայրանունը, քաղաքացիությունը, նաև ընտանեկան կապերը: Հիշեցնենք, որ «քաղաքացին իրավունքներ ու պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում իր անվամբ, որը ներառնում է նրա ազգանունը և անունը, նրա ցանկությանը՝ նաև հայրանունը» (Քաղօր. 22 հոդվ. 1-ին մաս):

¹⁵ «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը տես «Հայաստանի Հանրապետության գործող ծրենքների ժողովածու (1995-1999 թթ.)», Գիրք Ա., Եր. 1999, էջ 310-319, կամ առանձին հրատարակություններ:

ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 45 հոդվածի համաձայն Երեխային անուն է տրվում ծնողների համաձայնությամբ՝ նրա ծնունդը գրանցելիս: Անունը տրվում է անձին ցմահ կրելու համար: Երեխային կարելի է տալ միայն մեկ անուն: Հայ իրականության մեջ չի թույլատրվում նրան շնորհել կրկնակի անուն, ինչպես ընդունված է որոշ ազգությունների մոտ:

Երեխայի ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով: Եթե ծնողները կրում են տարբեր ազգանուններ, ապա երեխային ծնողների համաձայնությամբ տրվում է հոր կամ մոր ազգանունը: Ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները լուծում է խնամակաության ու հոգաբարձության մարմինը: Վերջապես եթե երեխայի հայրանունը չի որոշվել, ապա երեխային անուն է տրվում մոր ցուցումով, հայրանուն՝ որպես երեխայի հայր գրառված անձի անունով, ազգանուն՝ մոր ազգանունով:

Չնայած քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը ըստ էության տրվում է ցմահ կրելու համար, այնուամենայնիվ դրանք կարող են փոխվել տարբեր օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքների առկայության դեպքում: Ի դեպ, պետք է իրարից տարբերել անվան, հայրանվան, ազգանվան փոխումը անունը, հայրանունը, ազգանունը փոփոխելուց: Ինչպես կտեսնենք ստորև, քաղաքացին իրավունք ունի խնդրել քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին փոխել իր անունը կամ ազգանունը, անգամ՝ հայրանունը: Այդ խնդրանքը հնարավոր է բավարարել ՀՀ Կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի թիվ 941-Ն որոշմամբ հաստատված «Անվան փոխման կարգն ու պայմանները» նորմատիվ ակտին համապատասխան: Սինչեռ անվան, հայրանվան և ազգանվան փոփոխումը հնարավոր է միայն օրենքով նախատեսված որոշակի դեպքերում: Օրինակ, ազգանվան փոփոխումը հնարավոր է ամուսնանալիս, ամուսնալուծվելիս, երեխայի ծնունդը գրանցելուց հետո մեկ տարվա ընթացքում նրան որդեգրելիս: Անչափահաս երեխաների ազգանունը կարող է փոփոխվել, երբ ծնողները փոխում են իրենց ազգանունները, ինչպես նաև ծնողների ամուսնությունը դադարելուց հետո:

Անվան փոփոխումը թույլ է տրվում միայն երեխաներին որդեգրելիս: Հայրանվան փոփոխումը հնարավոր է միայն հայրությունը որոշելիս, նրան որդեգրելիս, ինչպես նաև հոր և նույն մի այլ անունով փոխելիս:

Քաղաքացիների անունը, հայրանունը, ազգանունը փոխելու հարցը կարգավորվում է ոչ միայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 46 և Քաղաքացիական կացության ակտերի մասին ՀՀ օրենքի 7-րդ գլխի կանոններով, այլև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. հունիսի 23-ի թիվ 941-Ն որոշմամբ¹⁶ հաստատված «Անվան փոխման կարգն ու պայմանները» իրավական ակտով: Այդ օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի համաձայն մինչև երեխայի տասը տարին լրանալը նրա ծնողների համատեղ դիմումի հիման վրա քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները փոխում են երեխայի անունը, ինչպես նաև նրան տրված ազգանունը մյուս ծնողի ազգանունով: Ավելացնենք նաև, որ տասը տարին լրացած որդեգրված երեխայի անվան, հայրանվան և ազգանվան փոփոխում կարող է կատարվել միայն նրա համաձայնությամբ, բացի այն դեպքերից, երբ այդ երեխայի որդեգրման համար նրա համաձայնությունը չի պահանջվել:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին օրենքի 7-րդ գլուխը նվիրված է քաղաքացու անվան փոխման պետական գրանցմանը: Եվ կարծես թե այն լրացնում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 45-րդ հոդվածին: Այսպես, Օրենքի 58 հոդվածի համաձայն տասնվեց տարին լրացած անձն իրավունք ունի սահմանված կարգով փոխելու իր անունը, որը ներառում է անունը, հայրանունը և ազգանունը: Տասնվեց տարին չլրացած անձի անվան փոխումը, ինչպես նաև ծնողի՝ նրան շնորհած ազգանվան փոխումը կարող է կատարվել ծնողների (որդեգրողների) համատեղ, կամ խնամակալի (հոգաբարձուի) խնդրանքով, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության ու հոգաբարձության մարմնի որոշմամբ):

¹⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Պաշտոնական Տեղեկագիր», թիվ 48, 2005թ., էջ 43-48

Անվան փոխման պետական գրանցումը կատարվում է անունը փոխել ցանկացող անձի մշտական բնակության կամ ծննդի պետական գրանցման վայրի ՔԿԱԳ մարմնում՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համաձայնությամբ:

Անունը փոխել ցանկացող չափահաս անձն անվան փոխման մասին դիմումը ներկայացնում է անձամբ իր մշտական բնակության վայրի կամ ծննդի պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման տարածքային մարմին: 16-ից 18 տարեկան անձը դիմում է ՔԿԱԳ տարածքային մարմին անձը հաստատող փաստաթղթի առկայության և ծնողների գրավոր համաձայնության դեպքում: Իսկ մինչև 16 տարեկան երեխայի անվան փոխման մասին դիմումը տրվում է նրա ծնողի (ծնողների) կամ օրինական այլ ներկայացուցիչներ կողմից: Բոլոր դեպքերում 10 տարեկան դարձած երեխաների անվան փոխման դեպքում պահանջվում է նրա համաձայնությունը:

Տասնվեցից մինչև տասնութ տարեկան անձն իր անվան փոխում կատարում է ծնողների, որդեգրողների կամ խնամակալի (հոգաբարձուի) գրավոր համաձայնության առկայության դեպքում: Եթե նման համաձայնություն չի տրվում, հարցը լուծվում է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

Անունը, ազգանունը և հայրանունը փոխել ցանկացող անձը այդ մասին գրավոր դիմում է իր բնակության վայրի ՔԿԱԳ բաժին, ներկայացնելով պահանջվող փաստաթղթերը:

Անվան փոխման մասին դիմումում պետք է հիմնավորվի անունը, հայրանունը, ազգանունը փոխելու շարժառիթը: Այնուհետև ՔԿԱԳ բաժինը այդ նյութերն ուղարկում է ՀՀ արդարադատության նախարարություն՝ նման փոխումը թույլատրելու հարցը լուծելու համար: Հարցի դրական լուծման դեպքում անվան, հայրանվան, ազգանվան փոխումը գրանցվում է ՔԿԱԳ բաժնում:

Անվան փոխման գրանցումը ՔԿԱԳ մարմինը մերժում է, եթե ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներին, եթե անունը փոխել ցան-

կացող անձի նկատմամբ հարուցված է քրեական գործ, նա կրում է քրեական պատիժ, ունի դատվածություն:

Անվան փոխման մասին դիմումի մեջ պետք է մասնավորապես նշվեն հետևյալ տեղեկությունները. անունը փոխել ցանկացող անձի ընտրած անունը, հայրանունը, ազգանունը, անունը փոխելու պատճառները, անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Դիմումի հետ միաժամանակ պետք է ներկայացվեն նաև դիմողի անձը հաստատող փաստաթուղթ, անունը փոխել ցանկացող անձի ծննդյան վկայականը, եթե դրանում կատարվելու են փոփոխություններ, դիմողի ամուսնության վկայականը, եթե նա ամուսնացած է, ամուսնալուծության վկայականը, եթե դիմողը ցանկանում է վերականգնել իր մինչամուսնական ազգանունը, դիմողի անչափահաս երեխաներից յուրաքանչյուրի ծննդյան վկայականը:

Մինչև 16 տարեկան երեխաների անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարել թույլատրվում է հետևյալ հարգելի պատճառների առկայության դեպքում.

- ա) անվան, ազգանվան անբարեհնչունությունը,
- բ) անվան, ազգանվան արտասանության դժվարությունը,
- գ) ծնողների համաձայնությամբ մյուս ծնողի ազգանունը կրելու ցանկությունը,
- դ) ծնունդը գրանցելիս երեխային ազգանուն կամ անուն տալիս ծնողների ցանկությունը հաշվի առնված չլինելը,
- ե) եթե երեխան փաստացի կրում է իր ծննդյան գրանցման մեջ նշված անունից տարբերվող անուն՝ ելնելով երեխայի շահերից,
- զ) եթե ծննդի գրանցման մեջ նշված է երեխայի թերի անունը (փաղաքշական, կրճատ, փոքրացնող):

Մի փոքր մեծ է այն շարժառիթների շրջանակը, որ կարող են հիմք հանիսանալ փոխելու 16 տարեկանից բարձր անձանց անունը, հայրանունը, ազգանունը: Դրանք թվարկված են «Անվան փոխման կարգի ու պայմանների» 9-րդ կետում: Այդ կետի համաձայն 16 տարեկանից բարձր տարիքի անձանց անվան, հայրանվան, և ազգանվան փոխման գրանցում կատարել թույլատրվում է հետևյալ հարգելի պատճառների առկայության դեպքում.

- ա) անվան, հայրանվան, ազգանվան անբարեհնչունությունը,

բ) անվան, հայրանվան, ազգանվան արտասանության դժվարությունը,

գ) ամուսնու ցանկությունը՝ մյուս ամուսնու հետ միասին մեկ ընդհանուր ազգանուն կրելու,

) մինչամուսնական ազգանունը կրելու ցանկությունը,

ե) երեխայի հետ միասին ընհանուր ազգանուն կրելու ցանկությունը, եթե ամուսինը մահացել է, իսկ դիմողը եղել է մինչամուսնական ազգանունով,

զ) դիմողի՝ փաստորեն դատախարակող անձի անունով հայրանուն և ազգանուն կրելու ցանկությունը,

է) դիմողի ազգությանը համապատասխան ազգանուն և անուն կրելու ցանկությունը,

ը) դիմողի տոհմական ազգանունը կրելու ցանկությունը:

Վերջին ժամանակները լայն տարածում է ստացել հայ երիտասարդների ու աղջիկների նախկինում տրված անունների այսպես կոչված հայացումը: Օրինակ, ՔԿԱԳ Նոր Նորքի բաժնում Նապոլեոնը փոխարինվել է Նաիրիով, Փեփրոնեն՝ Նարինեով, Յուրին՝ Արմանով, Ալմաստը՝ Հասմիկով: Տորգսինը՝ Արամով: Սակայն բազմաթիվ են այն դեպքերը, երբ նորածնին ժամանակին տրվել է մեկ անուն, իսկ տանը և շրջապատում կոչել են այլ անունով: Եվ քանի որ նրա շրջապատը իրեն ճանաչել է չգրանցված անունով, ուստի նա խնդրել է փոխել գրանցված անունը ոչ պաշտոնական անունով: Ասենք երեխայի ծնունդը գրանցելիս երեխային տրվել է մահացած հորեղբոր անունով՝ Գուրգեն, իսկ տանը նրան կոչել են Տիգրան: Գուրգենը խնդրել է իր Գուրգեն անվան փոխարեն իրեն կոչել Տիգրան: Գրեթե նույն կանոններով կատարվում են նաև ազգանվան փոփոխություններ:

Անվան փոխում թույլատրվում է միայն բացառության կարգով, յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով քաղաքացու խնդրանքը հիմնավորող փաստաթղթերը:

Սովորաբար այնքան հեշտությամբ չի ընկալվում քաղաքացու հայրանունը փոփոխելու հնարավորությունը: Իսկ իրական կյանքում հազվադեպ չէ այն երևույթը, երբ երեխայի ծնունդը գրանցելիս որպես հայր գրվում է նրա կենսաբանական հայրը, որը ընդհանրա-

պես այդ երեխայի խնամքով ու դաստիարակությամբ չի զբաղվել, ինքն էլ նրան չի ճանաչում: Իսկ իր խնամքով ու դաստիարակությամբ զբաղվել է իր խորթ հայրը՝ մոր նոր ամուսինը: Երեխան էլ նրան ճանաչում է որպես իր հոր: Նա էլ իրավունք ունի խնդրել ՔԿԱԳ մարմնին որպես հայրանուն իրեն գրել այդ խորթ հոր անունով:

Անվան փոխման մասին դիմումը ՔԿԱԳ մարմինը քննության է առնում դիմում տալու օրվանից երկամսյա ժամկետում: Հարգելի պատճառների առկայության դեպքում այդ ժամկետը կարող է երկարացվել ՔԿԱԳ բաժնի պետի կողմից մեկ ամսով, ՀՀ արդարադատության նախարարի կողմից՝ երկու ամսով:

ՔԿԱԳ մարմինը, ստանալով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, անվան փոխման վերաբերյալ կազմում է եզրակացություն, ոչ ուշ, քան դիմումն ստանալու օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում և համապատասխան գործի մյուս փաստաթղթերի հետ միաժամանակ ներկայացնում է ՀՀ արդարադատության նախարարություն գրանցման թույլտվություն ստանալու համար:

ՀՀ Արդարաատության նախարարությունը, հանձնին նրա ՔԿԱԳ Գործակալության, ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը, թույլատրում է նման փոխում կատարել կամ մերժում է քաղաքացու խնդրանքը:

Համապատասխան թույլտվությունն ստանալուց հետո անուն փոխել ցանկացող 16 տարեկանից բարձր տարիք ունեցող անձի դիմումը մյուս փաստաթղթերի հետ միասին ուղարկվում է նրա մշտական բնակության վայրի ոստիկանություն՝ եզրակացություն ստանալու նպատակով: Եզրակացության մեջ պետք է նշվեն անունը փոխել ցանկացող անձի նկատմամբ քրեական գործ հարուցված լինելու, քրեական պատիժ կրելու, նրա դատվածության և հետախուզման սեջ գտնվելու մասին:

Դիմումի մեջ նշված և իրենց հավաստի լինելու մեջ կասկած հարուցող փաստաթղթերում եղած փաստերն ու տեղեկություններն ուսումնասիրվում են ՔԿԱԳ տարածքային մարմնի կողմից համապատասխան կազմակերպություններին հարցումներ ուղարկելու միջոցով:

Ներկայացված փաստաթղթերի և ստուգման արդյունքների հիման վրա ՔԿԱԳ տարածքային մարմնին անվան փոխման մասին իր եզրակացության հետ միասին կազմում է գործ և ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալություն:

Անվան փոխման գրանցումը ՔԿԱԳ մարմինների կողմից մերժվում է, եթե ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ Կառավարության կողմից հաստատված Կարգի ու պայմանների և այլ իրավական ակտերի պահանջներին, անունը փոխել ցանկացող անձի նկատմամբ հարուցված է քրեական գործ, կրում է քրեական պատիժ, ունի դատվածություն, ինչպես նաև եթե անձը այն փոխում է երկրորդ անգամ, քացառությամբ 16 տարին չըրացած անձի անվան փոխումը:

ՔԿԱԳ մարմինը պարտավոր է դիմողի բնակության վայրի ոստիկանության մարմնին և զինվորական կոմիսարիատին անվան փոխման մասին տեղյակ պահել այդ փոփոխության պետական գրանցումից հետո առնվազն յոթ օրվա ընթացքում:

Անունը փոխելու մասին գրանցում կատարելուց հետո տրվում է անվան փոխման վկայական: Այդ վկայականում պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները.

ա) անունը փոխած անձի անունը, հայրանունը և ազգանունը (անվան փոխումից առաջ և հետո), ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, ազգությունը,

բ) անվան փոխման ակտի գրառման ժամանակը և համարը,

գ) անվան փոխման պետական գրանցման վայրը, (ՔԿԱԳ մարմնի անվանումը),

դ) անվան փոխման վկայական տալու ժամանակը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյաններում անվան փոխման ակտի հիման վրա անունը փոխած անձի վերաբերյալ նախկինում կատարված քաղաքացիական կացության ակտերի գրառումների մեջ սահմանված կարգով կատարվում են փոփոխություններ և դրանց հիման վրա տրվում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման նոր վկայականներ

(ՔԿԱԳ մասին օրենքի 63 հոդվ.): Այսինքն՝ քաղաքացուն տրվում է ծննդյան նոր վկայական, նոր անձնագիր: Իսկ քաղաքացին, ում անվան փոփոխություն է կատարվել, կարող է դրանց հիման վրա համապատասխան մարմիններին խնդրել իրեն տալու նոր փաստաթղթեր՝ կրթության մասին վկայականներ, որակավորման մասին նոր փաստաթղթեր:

Ծնողների կողմից անվան փոխման դեպքում անչափահաս երեխայի ծննդի ակտի գրառման մեջ փոխվում են ծնողների մասին տեղեկությունները: Չափահաս երեխայի ծննդի ակտի գրառման մեջ նրա ծնողների մասին տեղեկությունները փոխվում են տվյալ անձի դիմումի հիման վրա քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու համար օրենքով սահմանված կարգով:

§ 7. Մահվան պետական գրանցումը

Քաղաքացու մահվամբ դադարում են նրա ունեցած անձնական և գույքային բնույթի բոլոր իրավունքներն ու պարտականությունները: ՀՀ քաղաքացիական և ընտանեկան օրենսդրությամբ սահմանված է քաղաքացու մահը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցելու պարտադրականություն: Մահվան պետական գրանցման հարցերը կարգավորվում են ՔԿԱԳ մասին օրենքի 8-րդ գլխում սահմանված կանոններով՝ հանձնի այդ Օրենքի 64-68 հոդվածների:

Մահը գրանցվում է մահացողի բնակավայրում: Մահը ևս ենթակա է գրանցման համապատասխան հայտարարության հիման վրա: Ըստ որում մահվան մասին կարող են գրավոր կամ բանավոր հայտարարել հանգուցյալի ընտանիքի անդամները, ազգականները, հարևանները, ծանոթները, այն բուժական հիմնարկի վարչությունը, որտեղ վրա է հասել մահը և այլ անձնք: Ռիդկորության ժամանակ (զննաքննում, ծովային, գետային նավում, ինքնաթիռում) վրա հասած մահը կարող է գրանցվել մոտակա ՔԿԱԳ բաժնում, որտեղ հանգուցյալին իջեցրել են փոխարամիջոցից:

Քաղաքացու մահը գրանցելու համար հիմք են հանդիսանում բժշկական կազմակերպության կամ բժշկի տված՝ մահը հաստատող սահմանված ձևի փաստաթուղթը կամ անձի մահվան փաստի հաստատման կամ անձին մահացած հայտարարելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը: Ըստ որում

մահվան պետական գրանցումն իրականացնում է մահացածի վերջին բնակության վայրի, մահը վրա հասնելու վայրի, մահացածի դիակի հայտնաբերման կամ մահվան մասին փաստաթուղթ տված կազմակերպության գտնվելու վայրի ՔԿԱԳ մարմինը: Քաղաքացու մահը գրանցելու նպատակով ՔԿԱԳ մարմին դիմած անձը պետք է ներկայացնի մահացածի անձնագիրը, նաև զինվորական գրքույկը: Իսկ ՔԿԱԳ բաժինը մահացած անձի անձնագիրը մեկամսյա ժամկետում տալիս է ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանման անձնագրային բաժին, իսկ մահացած զինծառայողների զինվորական գրքույկը՝ տասնհինգ օրվա ընթացքում հանձնում է համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատին:

ՔԿԱԳ մասին օրենքի 66 հոդվածի համաձայն մահվան մասին հայտարարությունը ցանկացած անձանց և կազմակերպությունների կողմից պետք է տրվի ոչ ուշ, քան մահը վրա հասնելուց կամ մահացածի դին հայտնաբերելուց հետո եռօրյա ժամկետում: Ըստ որում մահվան մասին ՔԿԱԳ մարմին պարտավոր են գրավոր հայտարարել բժշկական կամ բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունը, քրեակատարողական հաստատության ղեկավարը, նախնական կալանքի վայրի ղեկավարը, նախաքննության կամ հետաքննության մարմինը, զինվորական մասի հրամանատարը, եթե մահը վրա է հասել, երբ անձը գտնվել է այդ հաստատությունում եղած ժամանակ:

Մահվան փաստը գրանցող պաշտոնատար անձը մահվան փաստի գրանցամատյանում պետք է գրանցի ՔԿԱԳ մասին օրենքի 67 հոդվածում նշված տվյալներ: Եթե մահվան պետական գրանցումը կատարվում է անձին մահացած հայտարարելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, մահվան ակտի գրառման մեջ որպես անձի մահվան օր նշվում է դատարանի

վճռով հաստատված մահվան օրը կամ դրա բացակայության դեպքում՝ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելու օրը:

Քաղաքացու մահվան փաստը գրանցելուց հետո տրվում է մահվան վկայական, որում պետք է նշված լինեն մահացածի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան վայրը և ժամանակը, ազգությունը, քաղաքացիությունը, մահվան վայրը, ժամանակը և պատճառը՝ մահվան ակտի գրառմանը համապատասխան: Մահվան վկայականում նշվում են նաև մահվան ակտի գրառման ժամանակը և համարը, մահվան պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ բաժնի անվանումը), մահվան վկայական տալու ժամանակը:

ԳԼՈՒԽ 3.

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՈՒՄ-ՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ, ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

Իրադարձություններով լեցուն այսօրվա կյանքում երբեմն հարկ է լինում քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյաններում, ավելի ճիշտ՝ այդ մատյաններում արված գրառումներում կատարել ուղղումներ, լրացումներ, երբեմն էլ կատարել փոփոխություններ, չնայած ընդհանուր կանոնի համաձայն քաղաքացիական կացության ակտերի գրանցումները պետք է մնան անփոփոխ: ՔԿԱԳ մարմիններում համապատասխան փոփոխություններ կարող են կատարվել դարձյալ բացառապես քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների կողմից: Մակայն այդ փոփոխություններն ու լրացումները ևս պետք է բխեն ինչպես անհատ քաղաքացիների շահերից, այլև համապատասխանեն հասարակական և պետական շահերին: Իսկ ՔԿԱԳ մարմիններն իրենց նախաձեռնությամբ իրավունք չունեն ակտերի գրանցումներում մտցնել թեկուզ և աննշան փոփոխություններ: Այսինքն ակտային գրանցումներում ցանկացած փոփոխություն կարող է կատարվել միայն շահագրգռված անձանց դիմումի հիման վրա, պահպանելով այդ առթիվ օրենքով սահմանված կանոնները:

Քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու մասին շահագրգիռ կամ սահմանված կարգով լիազորված անձը ներկայացնում է գրավոր դիմում իր բնակության վայրի կամ քաղաքացիական կացության ակտերի գրառումների պահպանման վայրի ՔԿԱԳ մարմնին: ՔԿԱԳ ակտերի գրանցումներում փոփոխություն կատարելու մասին դիմում կարող են տալ այն անձինք, որոնց վերաբերյալ ժամանակին կատարվել են ակտերի գրանցումներ:

Սովորաբար շահագրգռված անձինք իրենք էլ դիմում են քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյաններում իրենց վերաբերյալ կատարված գրառումներում լրացում, փոփոխություն կամ ուղղում կատարելու խնդրանքով: Չի թույլատրվում ընդունել

այլ անձի անուճով (օրինակ՝ եղբոր, քրոջ, այլ ազգականների) գրված դիմումը, առավել ևս դրա հիման վրա կատարել գրառումներ:

Տասնութ տարին չլրացած երեխաների վերաբերյալ կազմված ակտերի գրանցումները կարող են փոխվել նրանց ծնողների, որդեգրողների, խնամակալների, հոգաբարձուների, ինչպես նաև այլ անձանց ու հիմնարկությունների դիմումի համաձայն, որոնց խնամքի տակ են անչափահասները:

Իրական կյանքում քիչ չեն այն դեպքերը, երբ առանձին քաղաքացիներ դիմում են ՔԿԱԳ մարմիններին մահացած քաղաքացու վերաբերյալ արված գրառումներում ուղղումներ կատարելու նպատակով փոփոխություններ անցկացնել դրանցում: Մովորաբար նման պահանջներ ներկայացնում են մահացածի ժառանգները: Խոսքը վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216- 1220 հոդվածներում նշված ըստ օրենքի ժառանգներին: Սակայն ՔԿԱԳ մասին օրենքում այդ մասին հիշատակում չկա: Մեր կարծիքով անհրաժեշտ է այդ օրենքում կատարել համապատասխան լրացում, ՔԿԱԳ մարմիններին դիմելու իրավունք տալով նաև ըստ օրենքի ժառանգներին: Դրա համար միայն պահանջվում է վերախմբագրել ՔԿԱԳ մասին Օրենքի 71 հոդվածի 2-րդ կետը:

ՔԿԱԳ մարմիններին հասցեագրված դիմումում պետք է նշված լինեն հետևյալ տեղեկությունները. դիմողի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան վայրը և ժամանակը, բնակության վայրը, քաղաքացիական կացության ակտի գրառման այն տվյալները, որոնց մեջ դիմողը խնդրում է ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարել: Դիմողը պետք է ներկայացնի համապատասխան փոփոխությունը, ուղղումը կամ լրացումը կատարելու հիմքերի մասին անհրաժեշտ փաստաթղթեր:

Քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ՔԿԱԳ մարմիններն ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու համար հիմք են ընդունում Օրենքի 69 հոդվածի երկրորդ կետում նշված հետևյալ դեպքերը և այն էլ, եթե շահագրգիռ անձանց միջև վեճ չկա.

- ա) որդեգրման ակտի գրառումը,
- բ) հայրության որոշման ակտի գրառումը,

- գ) անվան փոխման ակտի գրառումը,
- դ) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը,
- ե) երեխայի անվան փոխման մասին խնամակալության ու հոգաբարձության մարմնի որոշումը,

զ) երեխայի ծննդի ակտի գրառման մեջ նրա հոր մասին տեղեկություններ լրացնելու, փոփոխելու, կամ հանելու մասին հոր հետ ամուսնության մեջ չգտնվող մոր դիմումը,

է) տվյալ անձի ծննդի ակտի գրառման մեջ ծնողների վերաբերյալ տեղեկությունները փոխելու մասին չափահաս անձի դիմումը ծնողի (ծնողների) կողմից իրենց անվան փոխման դեպքում,

ը) մահացածի անձը ճանաչելու մասին նախաքննության կամ հետաքննության մարմնի կողմից սահմանված ձևով տրված փաստաթուղթը, եթե մահը գրանցված է որպես անհայտ անձի մահ,

թ) քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում կամ փոփոխություն կատարելու մասին ՔԿԱԳ մարմնի եզրակացությունը օրենքով նախատեսված դեպքերում:

Հիշյալ հիմքերի առկայության դեպքում ՔԿԱԳ մարմինները կատարում են ՔԿԱԳ մարմիններում գրառումների ուղղումներ կամ փոփոխություններ, եթե շահագրգիռ անձանց միջև վեճեր չկան:

Մովորաբար ակտային գրառումներում լրացումներ, ուղղումներ ու փոփոխություններ կատարում են ՔԿԱԳ մարմինները: Բայց օրենքով նախատեսված որոշ դեպքերում քաղաքացիական կացության ակտերի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու համար ՔԿԱԳ մարմինը պետք է ստանա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համաձայնությունը: Այդ դեպքերը նշված են Օրենքի 70 հոդվածում: Դրանք այն գործերն են, երբ

- ա) քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ նշված են ոչ լրիվ կամ սխալ տեղեկություններ,
- բ) քաղաքացիական կացության ակտի գրառումը կատարվել է առանց օրենքով սահմանված կարգի պահպանման,
- գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական կազմակերպությունը տվել է սեռի փոփոխության մասին սահմանված ձևի փաստաթուղթ:

ՔԿԱԳ մարմիններում անհրաժեշտ ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու վերաբերյալ դիմումը պետք է քննարկվի մեկամսյա ժամկետում: Այդ ժամկետը կարող է երկարացվել հարգելի պատճառների առկայության դեպքում ՔԿԱԳ մարմնի ղեկավարի, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի կողմից:

Քաղաքացիական կացության ակտերի գրառման մեջ ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու մասին դիմումի և նրան կից անհրաժեշտ փաստաթղթերի առկայության դեպքում քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը եղած գրառումներում ուղղումներ, կամ փոփոխություններ կատարելու վերաբերյալ եզրակացություն է կազմում և գործի մյուս փաստաթղթերի հետ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն թույլտվություն ստանալու համար:

Շահագրգիռ անձանց միջև վեճի առկայության դեպքում քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ կամ փոփոխություններ կատարվում են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

ՀՀ արդարադատության նախարարության որոշման հիման վրա քաղաքացիական կացության ակտերի գրառման մեջ կատարվում է ուղղում, լրացում կամ փոփոխություն, կամ դիմողին մերժվում է նման ուղղման, լրացման կամ փոփոխության կատարումը:

Քաղաքացիական կացության ակտի ուղղված, լրացված կամ փոփոխված գրառման հիման վրա տրվում է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման նոր վկայական: Սակայն ՔԿԱԳ մասին Օրենքի 73 հոդվածի 2-րդ կետը խմբագրման կարիք ունի: Նրանում պետք է պարզապես ավելացնել, որ այդ նոր վկայականը տալիս է քաղաքացիական կացության ակտերի ուղղման, լրացման կամ փոփոխման ենթակա գրառման պահպանման վայրի ՔԿԱԳ մարմինը:

Ավելացնենք, որ քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարում է ուղղման, լրացման կամ փոփոխման ենթակա գրառման պահպանման վայրի ՔԿԱԳ մարմինը: Այդ մարմնի ղեկավարն էլ իր հերթին պարտավոր

է յոթ օրվա ընթացքում կատարված գրառումների մասին տեղյակ պահել քաղաքացիական կացության ակտի գրառման երկրորդ օրինակի պահպանման վայրի համապատասխան մարմին, իսկ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև դիմողի բնակության վայրի ոստիկանությանը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ մարմինների:

ԳԼՈՒԽ 4.
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒՅԱՆ ԱԿՏԵՐԻ
ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼԸ ԵՎ
ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

Քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնումն իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի կորած գրառումը կազմած կամ քաղաքացու մշտական բնակության վայրի ՔԿԱԳ մարմինը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, եթե սահմանված կարգով անհնար է իրականացնել քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնումը:

ՔԿԱԳ մասին օրենքի 74 հոդվածի հանձնարարականով քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնման կարգը սահմանվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թ. մայիսի 23-ի թիվ 995 –Ն որոշմամբ¹⁷:

Քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնումը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային մարմինների կողմից՝ այդ գրանցումները կորսվելու դեպքում: Ակտի գրառումը վերականգնելու մասին դիմումը ներկայացվում է դիմողի բնակության վայրի ՔԿԱԳ տարածքային մարմին: Քաղաքացիական կացության ակտերի մասին օրենքի սկզբնական տեքստում չկար քաղաքացիական կացության ակտի գրառումների վերականգնման դիմումի մասին նորմ: Այդպիսի նորմ սահմանվեց Հայաստանի Հանրապետության 2006 թ. մայիսի 23-ի օրենքով, որով Քաղաքացիական կացության մասին օրենքում ավելացվեց 74 պրիմ հոդվածը: Այդ հոդվածի համաձայն «քաղաքացիական կացության ակտի գրառումների վերականգնման համար քաղաքացին իր բնակության վայրի ՔԿԱԳ տարածքային մարմին գրավոր դիմում է ներկայացնում, որում նշվում են հետևյալ տեղեկությունները.

¹⁷ Հիշյալ Կարգը տես «Հայաստանի Հանրապետության Պաշտոնական Տեղեկագիր», 2005, թիվ 50, էջ 6-9:

- ա) անունը, ազգանունը (տոհմական ազգանունը), հայրանունը,
- բ) ծննդյան ժամանակը և վայրը, ազգությունը,
- գ) ընտանեկան դրությունը, անչափահաս և չափահաս երեխաների մասին,
- դ) ծնողների, եղբայրների և քույրերի մասին,
- ե) աշխատանքի (ուսման) վայրը և զբաղեցրած պաշտոնը դիմում տալու օրվա դրությամբ,
- զ) անհրաժեշտ այլ տեղեկություններ»¹⁸:

Ակտի գրանցման կորուստը պետք է հաստատված լինի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության հանրապետական արխիվի կողմից, որը, ի պատասխան դիմողի կամ ՔԿԱԳ համապատասխան մարմնի հարցման, տալիս է այդ գրանցման բացակայության մասին սահմանված ձևի տեղեկանք:

Ակտերի գրառումները վերականգնելու մասին դիմումները տրվում են այն անձանց կողմից, որոնց վերաբերում են այդ գրանցումները:

Որդեգրման, հայրության որոշման, ազգանվան, անվան, հայրանվան փոխման, ամուսնության, ամուսնալուծության, մահվան մասին գրառումները վերականգնվում են միայն այն դեպքում, երբ առկա են հաստատող փաստաթղթեր այն մասին, որ համապատասխան ակտի գրանցում նախկինում եղել է: Օրինակ, կան ակտերի գրանցման վերաբերյալ վկայականներ կամ այդ վկայականների հաստատված պատճեններ, անձը հաստատող փաստաթղթերում ակտերի գրանցման վերաբերյալ դրոշմակներ և այլն:

Դեռևս չափահաս չդարձած երեխաներին վերաբերող ակտերի գրառումները վերականգնվում են նրանց ծնողների, որդեգրողների, խնամակալների ու հոգաբարձուների, ինչպես նաև այն անձանց ու կազմակերպությունների դիմումների հիման վրա, որոնց դաստիարակությանն են հանձնված եղել այդ անչափահասները: Մահման-

¹⁸ Տե՛ս «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության 2006 թ. մայիսի 23-ի օրենքը (ՀՀՊՏ, թիվ 33, էջ 11-15):

ված կարգով անգործունակ ճանաչված անձանց վերաբերյալ ակտերի գրառումները վերականգնվում են նրանց խնամակալների դիմումների հիման վրա, իսկ այն անձանց վերաբերյալ, որոնց նկատմամբ ըստ նրանց առողջական վիճակի, հոգաբարձություն է սահմանված, ակտերի գրառումները կարող են վերականգնվել հոգաբարձուների դիմումների հիման վրա: Օրենքը հնարավոր է համարում ըստ անհրաժեշտության, ակտերի գրառումների վերականգնման մասին դիմումներով ՔԿԱԳ տարածքային մարմիններ դիմել սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչված 16 տարին լրացած անչափահասները (տես Կարգի 5-7 կետերը):

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության պետը մերժում է ակտերի գրառման վերականգնման մասին ՔԿԱԳ տարածքային մարմնի կողմից տրված եզրակացությունը, եթե ակտերի գրառման վերականգնման գործը կազմվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտմամբ, ակտերի գրառման վերականգնում կատարելու պահանջը հիմնավորված չէ, փաստաթղթերում առկա են տեղեկությունների ակնհայտ անհամապատասխանություններ:

Իրենց վերաբերող ակտերը Հայաստանի Հանրապետության ՔԿԱԳ տարածքային մարմիններում գրանցած օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ակտերի գրառումները վերականգնելու մասին դիմումները ներկայացնում են անձամբ կամ տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության միջոցով:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային մարմիններն ակտերի գրառումների վերականգնումներ կատարելու մասին տեղեկացնում են իրենց գտնվելու վայրի ոստիկանության մարմիններին, իսկ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերող ակտերի գրառումներում վերականգնումներ կատարելու մասին՝ նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը:

Եթե պարզվում է, որ քաղաքացիական կացության ակտի առաջնակի կամ վերականգնված գրառումը բացակայում է, քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման փաստի վերականգնման նպատակով դատարան դիմելու համար հիմք է համարվում ՔԿԱԳ մարմնի մերժումը: Գրանցումների վերականգնման հիման վրա տրվում է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման մասին վկայական քաղաքացիական կացության ակտի գրառումը վերականգնելու մասին նշումով:

Չի բացառվում, որ անհրաժեշտություն առաջանա չեղյալ հայտարարել

քաղաքացիական կացության ակտերի գրառումները: ՔԿԱԳ մասին Օրենքի 75 հոդվածի համաձայն քաղաքացիական կացության ակտի առաջնակի կամ վերականգնված գրառման չեղյալ հայտարարելն իրականացնում է չեղյալ հայտարարելու ենթակա քաղաքացիական կացության ակտի պահպանման վայրի ՔԿԱԳ մարմինը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

Քաղաքացիական կացության ակտերի մասին Օրենքի 85 հոդվածի համաձայն ըստ էության Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ ֆիքսվում է նոր կանոն: Այդ հոդվածի համաձայն « Մինչև քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինների կազմավորումը **եկեղեցական ծիսակատարություններով կատարված քաղաքացիական կացության ակտերը հավասարեցվում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում կատարված քաղաքացիական կացության ակտերին և ենթակա չեն պետական հետազգա գրանցման**»:

#

#

#

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մատյանները (ակտային գրքերը) կարված, համարակալված և կնքված վիճակում պատրաստվում են երկու համարժեք օրինակով: Գրանցից մեկը պահվում է տվյալ ակտերի պետական գրանցման վայրի ՔԿԱԳ մարմնում: Մյուս օրինակը պահվում է Հայաստանի Հանրապետության նախարարության արխիվում:

Օտարերկրյա պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկների կազմած քաղաքացիական կացության ակտերի գրառումների առաջին օրինակները և տվյալ ակտերի պետական գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը 30 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով փոխանցվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության արխիվ՝ պահպանման համար, իսկ երկրորդ օրինակները պահպանվում են Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում:

ՔԿԱԳ մարմիններում պահպանվում են նաև պետական գրանցման համար ներկայացված բոլոր փաստաթղթերը՝ ՀՀ արդարադատության նախարարի կողմից սահմանված կարգով:

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մատյանները (ակտային գրքերը) պահպանվում են ՔԿԱԳ մարմիններում համապատասխան քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ կատարելուց հետո 100 տարի՝ նախկինում գոյություն ունեցող 75 տարվա փոխարեն: Սակայն 100 տարին լրանալուց հետո ՔԿԱԳ մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով պետական արխիվ են փոխանցում քաղաքացիական կացության ակտերի գրառումների առաջին օրինակներից կազմված գրքերը, ինչպես նաև չափաբերական գրքերը: Քաղաքացիական կացության ակտերի գրառումների երկրորդ օրինակներից կազմված ակտերի գրքերը ենթակա են ոչնչացման:

Վերջում ավելացնենք նաև, որ ցանկացած հիմքով քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին ներկայացված փաստաթղթերի տվյալների իսկության համար պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը ներկայացրած անձինք: Իսկ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների ղեկավարները և աշխատողները պատասխանատվություն են կրում քաղաքացիական կացության ակտերի գրանցումներն անհիմն մերժելու, դրանց կատարումից խուսափելու կամ գրանցումն անհիմն կամ անօրինական կատարելու համար օրենքով սահմանված կարգով (տես ՔԿԱԳ մասին օրենքի 84 հոդվածը):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1.	
ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....	10
§ 1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության զարգացումը.....	10
§ 2. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքը	20
§ 3. Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինները և նրանց աշխատանքի կազմակերպումը.....	30
ԳԼՈՒԽ 2.	
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ	34
§ 1. Ծննդի պետական գրանցումը	36
§ 2. Ամուսնության պետական գրանցումը.....	44
§ 3. Ամուսնալուծության պետական գրանցումը.....	57
§ 4. Հայրության որոշման պետական գրանցումը	64
§ 5. Որդեգրման պետական գրանցումը.....	68
§ 6. Անվան փոփոխման պետական գրանցումը.....	72
§ 7. Մահվան պետական գրանցումը.....	81
ԳԼՈՒԽ 3.	
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ.....	84
ԳԼՈՒԽ 4.	
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼԸ ԵՎ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ	89

Չափը 60×84¹/₁₆: Թուղթը օֆսետ:
6 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ՀՀ, Երևան - 0025, Ալեք Մանուկյան 1